Ազգ
Azg
13 ՆՈՅԵՄԲԵՐ 2012 ԵՐԵՔՇԱԲԹԻ 201(5053)
ISSN: 1829-1651

# Ֆրանսուա Օլանդը վերահաստատում է իր դիրքորոշումը Ցեղասպանության նկատմամբ



Երեկ Ելիսեյան պալատում կայացավ Հայաստանի եւ Ֆրանսիայի հանրապետությունների նախագահների մամլո ասուլիսը, որի ընթացքում երկու երկրների ղեկավարները ողջունեցին Հայաստանն ու Ֆրանսիան իրար կապող բարեկամական հարաբերությունները, «**Ազգին**» տեղեկացնում է **Ժան Էքիզյանը** Փարիզից: Մամլո ասուլիսին հաջորդած պաշտոնական ճաշի ընթացքում, որին հրավիրված էին նաեւ Շառլ Ազնավուրը եւ ֆրանսահայ կազմակերպությունների համակարգող խորհրդի համաատենապետներ Մուրադ Փափազյանը եւ Արա Թորանյանը, նախագահ Ֆրանսուա Օլանդը հաստատել է, որ իր երկիրն ընդունելու է Հայոց ցեղասպանության ուրացումը քրեականացնելու մասին օրենք: Սակայն ավելացրել է նաեւ, որ անհրաժեշտ է ընդունել օրենքի այնպիսի նախագիծ, որը չհանդիպի Սահմանադրական խորհրդի գրաքննությանը:

# Բյուջեի քննարկումն այնքան էլ հախուռն չէր, ինչպես որ նախօրոք ենթադրվում էր

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երեկ խորհրդարանը նախ քվեարկությամբ մերժեց օրակարգ ներառել ընդդիմադիրների հեղինակած օրինագծերը: Դրանք վերաբերում էին «Հարսնաքարի» գործով ժամանակավոր հանձնաժողովի եւ հակակոռուպցիոն ժամանակավոր հանձնաժողովի ստեղծմանը («Ժառանգության» նախագծեր), ինչպես նաեւ կենսաթոշակի բարձրացմանը (Հրանտ Բագրատյանի նախագիծը):

Ապա քննարկեց մի քանի օրենք, որոնք ուղեկից էին երեկ խորհրդարանում ներկայացված 2013 թվականի բյուջեի նախագծին, ու այդ ժամանակ ընդդիմադիրներն ու ՀՀԿ խոսնակ Է. Շարմազանովը մի լավ իրար«տնտղեցին»:

Մինչեւ 2013 թվականի պետբյուջեի նախագծի քննարկումը երկրորդ ընթերցմամբ քննարկվեցին մի շարք նախագծեր, որոնք ամբողջացնելու էին բյուջետային տրամաբանությունը: Մասնավորապես՝ կառավարության այն նախաձեռնությունը, որով նվազագույն աշխատավարձը բարձրանում է 2500 դրամով, առիթ դարձավ, որ ՀԱԿ-ից **Հրանտ Բագրատյանի** հախուռն բացասական գնահատականներին պատասխանի ԱԺ փոխխոսնակ **Էդուարդ Շարմազանովը**. «ՀՀԿ-ից լավ ո՞վ գիտե ժողովրդի խնդիրները, ո՞վ է բարձրացրել ժողովրդի կենսամակարդակը, բյուջեն դեֆիցիտից բերել հավելման», այս որակի եւ այլ հարցեր տեղաց նա իր ելույթում, նշելով, որ իրենք (ՀՀԿ-ն) հասկանում են, թե 35 հազար դրամ աշխատավարձը բավարար չէ խնդիրները լուծելու համար, բայց հնարավորությունն այդպիսին է, եւ շարունակելու են տարեցտարի ավելացնել աշխատավարձը: Ու հավելեց, որ պետք չէ ԱԺ ամբիոնն ընտրություններից առաջ քաղաքական շահարկման առարկա դարձնել, իսկ ողջ քննադատությունն էլ (ընդդիմադիր կողմից այլ ելույթներ էին ունեցել մի շարք պատգամավորներ) դերասանություն անվանեց:

Իսկ նախկին վարչապետ Հրանտ Բագրատյանն իր ելույթում թվեր էր բերել՝ նշելով, որ Հայաստանում նվազագույն աշխատավարձը եվրոպական երկրների հետ համեմատած քսան անգամ ցածր է, որ ցածր նվազագույն աշխատավարձն ի վերջո բերում է շուկայի նեղացմանը, արտադրությունը չի ընդլայնվում, տնտեսությունը չի զարգանում: *Տես էջ 3*




# Այսօրվանից սկսվում է Արեգակի խավարումը

**Նոյեմբերի 13-14-ին կլինի Արեգակի լրիվ խավարում: Արեգակի խավարում տեղի է ունենում, երբ Լուսինն անցնում է Երկրի եւ Արեգակի միջով՝ մասամբ կամ ամբողջությամբ ծածկելով Արեգակի սկավառակը երկրային դիտորդի համար: Կախված Երկրի նկատմամբ իր դիրքից եւ Երկրից ունեցած հեռավորությունից՝ Լուսինը կարող է ծածկել Արեգակն ամբողջությամբ, ինչի ժամանակ լինում է Արեգակի լրիվ խավարում, իսկ երբ Լուսինը ծածկում է Արեգակի միայն մի մասը, այդ դեպքում տեղի է ունենում մասնակի խավարում:**

**Հայկական աստղագիտական ընկերությունից տեղեկացանք, որ Արեգակի մասնակի խավարումը կսկսվի նոյեմբերի 13-ին, Գրինվիչի ժամանակով (UTC) ժամը 19:37-ին, իսկ լրիվ խավարումը՝ ժամը 20:35-ին: Ժամը 22:12-ին կլինի առավելագույն փուլը, որը կտեւի 4 րոպե 2 վայրկյան: Խավարումը դիտվելու է Հյուսիսային Ավստրալիայից սկսած՝ Խաղաղ օվկիանոսի վրայով մինչեւ չիլիական Խուան Ֆերնանդես կղզիները: Հայաստանից խավարումը չի դիտվելու: Այս խավարումը կլինի 2012 թվականի Արեգակի երկու խավարումներից երկրորդը:**

Ի. Պ.

# Թաներ Աքչամը հրատարակել է նոր գիրք հայերից բռնագրավված սեփականությունների մասին

Հայոց ցեղասպանությունը ճանաչած հայտնի թուրք մտավորական Թաներ Աքչամը Ումիթ Քուրթի հետ համատեղ հրատարակել է նոր գիրք «Օրենքների ոգին. «Լքյալ գույքերի» մասին օրենքներում հետեւել ցեղասպանության հետքին» խորագրով: Այս մասին հաղորդում է «Արմենպրես»-ը՝ հղում անելով «Իլեթիշիմ» հրատարակչության պաշտոնական կայքին:

Գիրքը ներկայացնում է Հայոց ցեղասպանության ընթացքում եւ դրանից հետո յուրացված հայկական ունեցվածքի խնդիրը: «Օսմանյան կայսրությունում 1915 թվականին տեղի ունեցած մեծ դժբախտությունը ոչ միայն մարդկային կյանքեր խլեց, այլ նաեւ խլեց նրանց սեփականությունը», գրված է գրքում՝ ընդգծելով, որ երկար տարիներ քննարկման թեմա է եղել այն հարցը, թե արդյոք այդ սեփականությունը վերադարձվելո՞ւ է իրենց տերերին, թե՞ ոչ: Աքչամի նոր գրքում մեջբերվում են նաեւ հայկական «Ակօս» պարբերականի նախկին գլխավոր խմբագիր Հրանտ Դինքի խոսքերը՝ ներկայումս Թուրքիայի Հանրապետությունում առկա հայկական սեփականության մասին: «Եթե հարց առաջանա, թե ո՞ւմ միջեւ է բաժանվել հայկական գույքը եւ թե «ո՞ւմ ի՞նչ է եղել», դա շատ մեծ ցնցում կառաջացնի: Քանի որ կարժեզրկի երկրին հարմարեցված մի ողջ պատմություն: Հասարակությունում կձեւավորվի այն միտքը, որ եթե այդ պատմությունը սխալ էր ներկայացվել, ուրեմն այլ բաներ էլ են սխալ պատմվել: Թուրքիայում էական փոփոխություն կգրանցվի»:

# ԲՀԿ-ն իրականացնում է խոստացված խորհրդակցությունները

Երեկ հանդիպել են ԲՀԿ (Վարդան Օսկանյան եւ Նաիրա Զոհրաբյան) եւ ՀԱԿ ներկայացուցիչները (Լեւոն Զուրաբյան եւ Ավետիս Ավագյան) եւ տարբեր հարցերով բանակցելուց հետո պայմանավորվել են կրկին հանդիպել: Վ. Օսկանյանի՝ ԶԼՄ-ներից մեկին փոխանցած խոսքից կարելի է ենթադրել, որ ինչ-որ ընդհանրություններ բանակցությունների մեջ գտնվում են, այնուամենայնիվ, հարցն այն է, թե հաջորդ հանդիպման համար ո՞ր հարցերն են մնացել չպարզաբանված: Այս հանդիպումների սկզբնաղբյուրը, հիշեցնենք, ԲՀԿ-ն է, որը 100 տոկոս համամասնական կարգի եւ խորհրդարանական համակարգի անցնելու առաջարկ է անում եւ նախաձեռնել է խորհրդակցություններ քաղաքական կուսակցությունների հետ: Հանդիպումից հետո ՀԱԿ ներկայացուցիչ Լեւոն Զուրաբյանը չի բացառել, որ ԲՀԿ-ՀԱԿ համագործակցությամբ կարող է առաջադրվել նախագահի միասնական թեկնածու:

Անցած շաբաթ օրը ԲՀԿ ներկայացուցիչներ Ն. Զոհրաբյանն ու Վ. Օսկանյանը նույն կերպ հանդիպել են նաեւ ՀՅԴ ներկայացուցիչներ Արմեն Ռուստամյանի եւ Արսեն Համբարձումյանի հետ՝ նույն թեմայով: Սակայն առանձնապես մանրամասներ այդ հանդիպումներից հայտնի չեն:

Հիշեցնենք, որ այս բոլորն Է. Շարմազանովն անվանել էր պլատոնական սիրավեպ եւ սիրախաղ՝ անընդունելի համարելով քաղաքական ուժերի այն պահվածքը, որ ընտրությունից ընտրություն կամ ամիսը մեկ կարծիք է փոխում: Ս. Խ.

**Թերթի այս համարի հետ տարածվում է «ՀՀ պետական բյուջեի նախագիծ 2013» ներդիրը**

# Անշարժ գույքի շուկայի վիճակը այս տարվա 9 ամիսներին

## *Գները Երեւանում նվազել են, մարզերում՝ աճել*

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի՝ շուկայի վերլուծության տվյալների համաձայն, 2012-ի հունվար-սեպտեմբերին Հայաստանի անշարժ գույքի շուկայում կատարվել են 122 406 գործարք, որը 10,3 տոկոս ցածր է նախորդ տարվա 9 ամիսների համեմատ: Օտարման գործարքների թիվը կազմել է 333 88, որից առուվաճառքներինը՝ 76,3 տոկոսը: Մնացածը նվիրատվություններն ու փոխանակություններն են: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 40,3 տոկոսն արձանագրվել է Երեւան քաղաքում, իսկ 2011-ի 9 ամիսների համեմատ դրանց քանակը նվազել է 4,8 տոկոսով:

Մայրաքաղաքում առուվաճառքի 10 009 գործարքների 60,6 տոկոսն արձանագրվել է բազմաբնակարան շենքերի բնակարանների նկատմամբ: 2011-ի հունվար-սեպտեմբերի համեմատ բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը Երեւանում 2012-ի 9 ամիսներին նվազել է 11 տոկոսով:

Բնակարանների շուկայական միջին գները Երեւանում 2012-ի հունվար-սեպտեմբերին 2011-ի նույն ժամանակահատվածի համեմատ նվազել են 1 տոկոսով: Ըստ վարչական շրջանների, Երեւանում բնակարանների 1 քմ մակերեսի միջին շուկայական գները այսպիսին են եղել.

*Տես էջ 3*

| Վարչական շրջաններ | Միջին գները (դրամ) | |
|---|---|---|
| | 9 ամիս 2011 թ. | 9 ամիս 2012 թ. |
| Կենտրոն | 442300 | 409100 |
| Արաբկիր | 345400 | 339000 |
| Քանաքեռ-Զեյթուն | 266700 | 266100 |
| Նոր Նորք | 225500 | 229400 |
| Ավան | 236800 | 239100 |
| Էրեբունի | 234900 | 236300 |
| Շենգավիթ | 230100 | 235000 |
| Դավթաշեն | 258200 | 259900 |
| Աջափնյակ | 223100 | 226700 |
| Մալաթիա-Սեբաստիա | 222600 | 225000 |
| Նուբարաշեն | 147500 | 140300 |
| Միջինը Երեւանում (բացի Նորք-Մարաշից) | 257600 | 255100 |

ԱԶԳ

Ընթացիկ



# Սեւան քաղաքը նշեց իր ծննդյան օրը

Նոյեմբերի 10-ին տոնական հանդերձանք էր հագել Սեւանը: Տոնական էին նրա գլխավոր զարկերակը՝ Նաիրյան փողոցը, բակերն ու մյուս փողոցները, տոնական էր մարդկանց տրամադրությունը: Քաղաքը նշում էր իր ծննդյան օրը: Հանդիսությունները մեկնարկեցին քաղաքի գլխավոր՝ Արցախյան պատերազմի հերոս Վլ. Կարապետյանի անունը կրող հրապարակից՝ «Ծնունդդ շնորհավո՛ր, Սեւան» կարգախոսով: Հյուրերի թվում էին Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը, բազմաթիվ համայնքների ղեկավարներ: Մի ակնթարթում հրապարակը լցվում է երեխաներով, եւ նրանք շուրջպար բռնած ազդարարում են Սեւանին նվիրված տոնակատարությունների սկիզբը:



1842թ. ճիշտ այս օրերին ռուս աղանդավորների՝ մոլոկանների քսան ֆուրգոնից բաղկացած մի շարասյուն, Վրաստանից գաղտնաբար դուրս գալով, անցավ Սեմյոնովկայի լեռնանցքը եւ Սեւանա լճի հյուրընկալ հայացքի տակ կանգ առավ Հրազդան գետի արանքում կանաչին տվող ցամաքի մի ընդարձակ լեզվակի վրա, այստեղ նրանք բնակավայր հիմնեցին եւ ի պատիվ ռուսական կայսր Պավել Առաջինի վեց աղջիկներից Ելենայի՝ Ելենովկա կոչեցին: Սա է Սեւանի պատմության սկիզբը, եւ 170 տարի անց էլ մոլոկանները երկու սայլերով մտնում են հրապարակ:

Հետո հոծ բազմությունը՝ պատանի երկրապահների խրոխտ քայլերի ուղեկցությամբ շարժվում է նախկինում մոլոկաններով բնակեցված թաղամաս, որտեղ Սեւանի անվանակոչման ու նաեւ մոլոկանների պատմությունն է ներկայացվում՝ ուղեկցվելով ռուսական խոհանոցի հյուրասիրությամբ: Ապա՝ «Լռության րոպե»՝ Եղեռնի զոհերի հուշարձանի մոտ: Միջոցառումները շարունակվում են Սեւանի շուկայի դիմաց, ուր սեւանյան աշնան բարիքներն են ցուցադրվում: Այստեղ տարածքի գյուղերից ամեն մեկը ներկայացել էր յուրովի՝ իր ճոխ ու տոնական սեղանով, որոնցից հետ չէին մնացել քաղաքի հասարակական սննդի օբյեկտները, Սեւանի հացի գործարանը, շրջակա առեւտրի սրահները: Հյուրասիրության էր հանվել ամեն ինչ՝ ինչ տալիս է Սեւանի բնությունը ու ինչ ընդունակ է պատրաստելու հյուրասեր սեւանցին՝ ղափամա ու խորոված, գաթա ու հալվա, զանազան այլ համեղ ուտեստներ...

Քաղաքապետարանի բակում արդեն քաղաքի խորհրդանշական բանալին է հանձնվում համայնքի նորընտիր ղեկավար Ռուդիկ Ղուկասյանին: Կարեւորելով նման միջոցառումների անցկացումը՝ քաղաքապետը նշեց. «Նախաձեռնելով Սեւանի տոնակատարության անցկացումը, որ հետայսու դառնալու է ավանդական, մեր նպատակն է, որ այն դառնա սեւանցիների միասնության խորհրդանիշը, եւ այդ միասնությունը մեզ հիշեցնի, որ մենք պարտք ունենք մեր քաղաքի հանդեպ»: Ապա «Օրինակելի ընտանիք»-ի հավաստագիր է հանձնվում Մնացականյանների ընտանիքին՝ հայ ընտանիքի ավանդույթների պահպանման, հասարակության մեջ եւ ընտանիքում օրինակելի կերպարի դրսեւորման, տարբեր բնագավառներում ունեցած նշանակալի ձեռքբերումների համար:

Միջոցառումը եզրափակվեց քաղաքային մշակույթի պալատում տեղի ունեցած տոնական համերգով, իսկ երեկոյան տրվեց հրավառություն:

Պ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Սեւան

ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

## Տարոն Մարգարյան. «Տրանսպորտը պետք է աշխատի նաեւ ուշ ժամերին»

Ինչպես տեղեկացանք Երեւանի քաղաքապետարանի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչությունից, Երեւանի քաղաքապետ **Տարոն Մարգարյանը** երեկ տեղի ունեցած հերթական աշխատանքային խորհրդակցության ժամանակ հանձնարարել է հսկողություն իրականացնել ուշ ժամերին տրանսպորտի կանոնավոր աշխատանքի նկատմամբ: «Բոլոր երթուղիներում ուղեւորատար տրանսպորտը պետք է աշխատի մրցույթի պայմաններով նախատեսված ժամանակացույցով, նաեւ օրվա ուշ ժամերին: Երթուղիների սպասարկումը խախտումներով իրականացնող ընկերությունները պետք է ենթարկվեն պատասխանատվության նոր կնքված պայմանագրերի պահանջներին համապատասխան: Մեր համաքաղաքացիները պետք է ստանան որակյալ սպասարկում», նշել է նա:

## Փոսերի նորոգում եւ ճաքալցում

Զեկուցվել է, որ սահմանված ժամանակացույցի համաձայն՝ մայրաքաղաքում շարունակվում են քաղաքապետարանի 2012-ի շինբարեկարգման ծրագրերով նախատեսված փոսերի նորոգման եւ ճաքալցման աշխատանքները: Ավարտին են մոտենում քարաթափման եւ հենապատերի նորոգման ու ամրացման աշխատանքները, ինչի շնորհիվ մայրաքաղաքի քարաթափման տեսանկյունից ժամանակին վտանգ ներկայացնող ճանապարհահատվածներն այլեւս ապահով են ինչպես երթեւեկության, այնպես էլ հետիոտների համար:

## Հեռացվել են դպրոցի եւ մանկապարտեզի տնօրենները

Կրթության վարչության պետը զեկուցել է, որ մատակարարվող սննդի որակի վերահսկողության, ինչպես նաեւ դրամահավաքության երեւույթները բացառելու նպատակով քաղաքապետի հանձնարարությամբ դպրոցներում եւ մանկապարտեզներում շարունակվում են ստուգայցերն ու պարբերական խորհրդակցությունները: Անցյալ շաբաթ իրականացված ստուգայցերի ժամանակ արձանագրված խախտումների հետեւանքով աշխատանքից ազատվել են թիվ 51 դպրոցի եւ թիվ 60 մանկապարտեզի տնօրենները:

## Ձմռան նախապատրաստման աշխատանքներ

Անդրադառնալով մայրաքաղաքի սանմաքրման աշխատանքներին՝ Երեւանի քաղաքապետը հանձնարարել է աշնանային տերեւաթափի մաքրման աշխատանքներն իրականացնել մայրաքաղաքի բոլոր հատվածներում՝ ներառելով նաեւ բակային տարածքները, ինչպես նաեւ հարակից ընդհանուր օգտագործման տարածքների պարտադիր բարեկարգման աշխատանքներում ներգրավել տնտեսվարողներին: Զեկուցվել է, որ մայրաքաղաքի վարչական շրջաններում արդեն մեկնարկել են ձմռան նախապատրաստական աշխատանքները: Համատիրությունների կողմից բազմաբնակարան շենքերում իրականացվում են ջրթափ խողովակների նորոգման, շքամուտքերի ապակիների տեղադրման, ներքին ցանցերի ջերմամեկուսացման աշխատանքներ: Ընթացքի մեջ են նաեւ աղի եւ ավազի կուտակման աշխատանքները:

## Նոյեմբերի 17-ին՝ աշնանային ծառատունկ

Նոյեմբերի 17-ին հայտարարված համաքաղաքային աշնանային ծառատունկի մասով զեկուցվել է, որ ներկրվել են համապատասխան քանակությամբ տնկիներ: Տարոն Մարգարյանն աշխատակազմի համապատասխան կառույցներին եւ վարչական շրջաններին հանձնարարել է ապահովել համատիրությունների ու բնակիչների մասնակցությունը ծառատունկին, ինչպես նաեւ պատշաճ իրազեկել բոլոր գերատեսչություններին ու կազմակերպություններին՝ գործընթացն առավել հասցեագրված իրականացնելու համար:

## Գույքահարկի արտոնության առաջարկ

Քաղաքապետը հանձնարարել է առաջարկություններ ներկայացնել ազատամարտիկների եւ վետերանների ընտանիքներին գույքահարկի արտոնություն տրամադրելու վերաբերյալ: Հանձնարարվել է քննարկել եւ առաջարկություն ներկայացնել Նկարիչների միության անդամ նկարիչների արվեստանոցներին նույնպես գույքահարկի արտոնություն տրամադրելու վերաբերյալ:

Ա. Մ.

# Հունվարի 1-ից կհեռարձակվի «Միր-24»-ը

«Միր» միջպետական հեռուստառադիոընկերության 20-ամյա հոբելյանի առթիվ ընկերության հայաստանյան մասնաճյուղի տնօրեն **Մերուժան Սարգսյանը** երեկ հանդիպեց լրագրողներին: Նրա փոխանցմամբ՝ 2013 թվականի հունվարի 1-ից «Միր» հեռուստառադիոընկերությունը մտադիր է սկսել նոր «Միր-24» շուրջօրյա հեռուստաալիքի աշխատանքները: Ըստ Մերուժան Սարգսյանի՝ արբանյակային այս նոր հեռուստաալիքը կլինի նոր ձեւաչափի լրատվական ալիք, որը հնարավորություն կտա առանձին հեռարձակելու ԱՊՀ երկրների իրադարձությունները: Շուրջօրյա հեռուստաալիքի նախագիծը հաստատվել է այս տարվա սեպտեմբերին Յալթայում: Մերուժան Սարգսյանն ընդգծեց, որ «Միր» հեռուստաալիքի ներկայիս ձեւաչափը բավարար չէ ԱՊՀ տարածքում տեղի ունեցող բոլոր միջոցառումների լուսաբանման համար, եւ նման ալիքի ստեղծման անհրաժեշտությունը կար վաղուց:

Նախատեսվում է, որ արդեն շուրջօրյա «Միր-24»-ը յուրաքանչյուր կես ժամը մեկ կհեռարձակի նորությունների կարճ թողարկումներ, իսկ 3 ժամը մեկ՝ թողարկումներ մեկնաբանություններով:

Մերուժան Սարգսյանը նաեւ անդրադարձավ հեռուստաալիքի անցած ուղուն՝ նշելով, որ «Միր»-ը ստեղծվեց մի ժամանակահատվածում, երբ Խորհրդային Միության փլուզումից հետո նոր կառույց հիմնելու գաղափարը դրական չէր ընդունվում նախկին խորհրդային երկրների ղեկավարությունների շրջանում. «Այնուամենայնիվ, ԱՊՀ անդամ երկրները համաձայնեցին ստեղծել եւ պահպանել հեռուստաընկերությունը»:

Ի. Պ.

# Գյումրու նոր ավագանին ստանձնեց իր լիազորությունները

Եթե այս տարվա սեպտեմբերի 9-ին Գյումրու քաղաքապետ ընտրված **Սամվել Բալասանյանն** արդեն մեկ ամիս է՝ պաշտոնավարում է, ապա 21 անդամներից կազմված համայնքային նոր ավագանին միայն երեկ՝ օրենքով նախատեսված ժամկետում պաշտոնապես ստանձնել է իր լիազորությունները: Այս առթիվ «Հոկտեմբեր» կինոթատրոնում կազմակերպված հանդիսավոր արարողության ժամանակ հանձնվել են նորընտիր քաղաքապետի եւ ավագանու անդամների վկայականները, տեղի է ունեցել խորհրդանշական երդմնակալություն:

«Այսօր մենք պետք է հպարտ լինենք, որ Գյումրու ընտրյալներն ենք»,- իր խոսքում ասել է քաղաքապետը, չմոռանալով նշել, որ դա մեծ պատասխանատվություն է: Բալասանյանին եւ նոր քաղաքապետարանին Գյումրու բազում խնդիրների հետ մեկտեղ նախորդ համայնքապետ Վարդան Ղուկասյանից «ժառանգություն» է մնացել նաեւ շուրջ 1 մլրդ 200 մլն դրամի ֆինանսական պարտք, որն այս քաղաքի բյուջեի համար մեծ բեռ է: Նախորդ ավագանին, որն իր լիազորության բոլոր չորս տարիների ընթացքում ընդամենը եղել է Ղուկասյանի որոշումների անքննադատ ու միաձայն վավերացնող, վերջերս հրավիրված իր արտահերթ (վերջին) նիստում դեմ քվեարկեց քաղաքապետարանում աուդիտորական ստուգումներ անցկացնելու նոր քաղաքապետի առաջարկությանը... Այս նույն հարցի քննարկումով նոյեմբերի 22-ին իր առաջին նիստը կգումարի նոր ավագանին:

Գ. Մ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԱ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:

“AZG” Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Կարապետյան եղբայրները 2 մլն դոլարից ավելի գումար կտրամադրեն Վանաձորի ծննդատան կառուցման համար

«Տաշիր» բարեգործական հիմնադրամը, Կարեն եւ Սամվել Կարապետյանների գլխավորությամբ, կֆինանսավորի Վանաձորում կառուցվելիք գերժամանակակից առողջապահական համալիրի ծննդատան շինարարությունը: Այս մասին տեղեկացրեց ԱԺ պատգամավոր Կարեն Կարապետյանի գրասենյակի ղեկավար **Արտակ Ճաղարյանը**: Վերջինիս խոսքերով, համալիրը, որի շինաշխատանքները նախատեսվում է սկսել առաջիկայում, կառուցվելու է Համաշխարհային բանկի միջոցներով, իսկ շուրջ 2500 քմ տարածքով ծննդատունը՝ «Տաշիրի», որի համար Կարապետյան եղբայրները նախնական հաշվարկներով կտրամադրեն 2 մլն ԱՄՆ դոլարից ավելի գումար:

Խոսելով «Տաշիր» բարեգործական հիմնադրամի առաջիկա ծրագրերի մասին՝ Ա. Ճաղարյանը տեղեկացրեց, որ դեկտեմբերի 20-ին Վանաձորում կյանքի կկոչվի եւս երկու ծրագիր. Կարապետյանների ընտանիքի կողմից կպարգեւատրվեն Լոռու մարզի մոտ 50 երիտասարդ գիտնական, որոնք ապրում, աշխատում եւ ստեղծագործում են մարզի տարածքում, ինչպես նաեւ Լոռու մարզի բոլոր դպրոցների եւ միջին մասնագիտական ուսհաստատությունների շուրջ 300 մանկավարժ: Ուսուցիչների թեկնածությունները ներկայացրել են դպրոցների մանկավարժական խորհուրդները:

Վերջին մի քանի տարիներին Սամվել եւ Կարեն Կարապետյանների հովանավորությամբ պարբերաբար կազմակերպվել է Լոռու մարզի հազարավոր երիտասարդների եռօրյա հավաքն ու հանգիստը Ծաղկաձորում: Համագործակցելով «Լոռու երիտասարդ սերունդ» հասարակական կազմակերպության հետ՝ համանման մի ծրագիր էլ «Տաշիր» հիմնադրամը կիրականացնի դեկտեմբերին՝ ընդգրկելով շուրջ 300 երիտասարդների:

Կարեն Կարապետյանի գրասենյակի ղեկավարը նաեւ տեղեկացրեց, որ իրենք դիմել են հանրապետության բոլոր պետական բուհերի ղեկավարներին խնդրանքով՝ տրամադրել իրենց բուհերում սովորող Լոռու մարզի միակողմանի եւ երկկողմանի ծնողազուրկ ուսանողների ցանկը: Այն ամբողջանալուն պես հիմնադրամը կքննարկի այդ ուսանողների հետ կապված ծրագիր իրականացնելու հարցը, ինչի մասին կտեղեկացվի լրացուցիչ:

*«Տաշիր» բարեգործական հիմնադրամի մամլո ծառայություն*

# Մետրոպոլիտ Դիոնիսիոսը Կալկաթայի հայոց Մարդասիրական ճեմարանում



Նոյեմբերի 10-ին հնդկահայոց հոգեւոր հովիվ, Հայոց մարդասիրական ճեմարանի կառավարիչ Տեր Խորեն վարդապետ Հովհաննիսյանը ճեմարանի իր գրասենյակում ընդունեց Հնդիկ Մալաբար եկեղեցու Կալկաթայի թեմի մետրոպոլիտ դոկտոր Ջոզեֆ Մար Դիոնիսիոսին եւ նրան ուղեկցող պատվիրակությանը: Հայր Սուրբը բարի գալուստ մաղթեց բարձրաստիճան հյուրին եւ շնորհավորեց Հնդկաստանում Հնդիկ Մալաբար եկեղեցու կաթողիկոսության հիմնադրման 100-ամյակի առթիվ ու մաղթեց, որ Երկնավորը նորանոր հարյուրամյակներ պարգեւի եւ շեն ու հաստատուն պահի քույր եկեղեցու հոգեւոր կենտրոնը Քերալայում:

Մետրոպոլիտ Դիոնիսիոսն իր գոհունակությունը հայտնեց հանդիպման համար, հետաքրքրվեց հնդկահայ հոգեւոր հովվության եւ Հայոց մարդասիրական ճեմարանի գործունեությամբ: Նա Հայր Խորենին հրավիրեց իրենց հոգեւոր կենտրոն՝ Քերալա, ինքն էլ ցանկություն ու պատրաստակամություն հայտնեց պատեհ առիթով այցելել Մայր աթոռ սուրբ Էջմիածին, Հայաստան:

Նրանք միասին աղոթեցին, ապա Մարդասիրականի բակում Դիոնիսիոս սրբազանն իր պատգամը փոխանցեց ճեմարանի աշակերտներին՝ հորդորելով ուսման մեջ լինել առաջադեմ, սիրել գիրքն ու լինել Հայաստանի արժանի եւ հպարտ զավակները:

Հրաժեշտից առաջ սրբազան հայրը եւ հայր սուրբը հուշանվերներ փոխանակեցին:

# Անշարժ գույքի շուկայի վիճակը...

*1-ին էջից*

Մարզերում, բացառությամբ Երեւանի, 2012-ի 9 ամիսներին վաճառվել են 3069 բնակարաններ, որոնց քանակը 2011-ի նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 1,3 տոկոսով, իսկ միջին գներն էլ՝ 4,9 տոկոսով:

Երեւանից հետո ամենաթանկ բնակարանները 2012-ի հունվար-սեպտեմբերին եղել են Ծաղկաձորում, որտեղ 1 քմ մակերեսի շուկայական գինը կազմել է ավելի քան 293 հազար դրամ: Երկրորդը Արմավիրն է՝ 177 հազար դրամ, Վաղարշապատում (Էջմիածնում) եւ Աբովյանում՝ 151 հազար դրամ 1 քմ-ի դիմաց: Ապա գալիս են Նոր Հաճընը՝ 128 հազար դրամ, Եղեգնաձորը 118 հազար դրամ, Գորիսը՝ 115 հազար, Իջեւանը՝ 112 հազար դրամ, Աշտարակը՝ 110 հազար դրամ 1 քմ-ի դիմաց ցուցանիշներով:

2012-ի հունվար-սեպտեմբերին Հայաստանում գրանցվել է անհատական տների առուվաճառքի 3437 գործարք, որից 987-ը՝ Երեւանում: Մայրաքաղաքում անհատական տների առուվաճառքի գործարքների քանակը աճել է 2,7 տոկոսով, իսկ մարզերում՝ նվազել 8,6 տոկոսով:

Միջինացված՝ 250 քմ շինության մակերես եւ 400 քմ տնամերձ ունեցող անհատական տների 1 քմ-ի միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը) 2012-ի 9 ամիսներին 2011-ի նույն ժամանակահատվածի համեմատ նվազել են 0,3 տոկոսով: Ըստ Երեւանի վարչական շրջանների գներն այսպիսին են եղել (տես աղյուսակը):

Մարզերում միջինացված են 200 քմ շինության եւ 1000 քմ տնամերձ մակերեսով անհատական տների գները: Այստեղ միջին գները 2012-ի հունվար-սեպտեմբերին 2011-ի հունվար-սեպտեմբերի համեմատ աճել են 0,7 տոկոսով: Ամենաթանկ անհատական տները դարձյալ Ծաղկաձորում են՝ 1 քմ-ն 304 հազար դրամ: Ապա Վաղարշապատն ու Աբովյանը, որտեղ 1 քմ-ն կազմել է 149 հազար դրամ: Հաջորդ Աշտարակն է՝ 132 հազար դրամ, Նոր Հաճընը՝ 128 հազար դրամ, Գորիսը՝ 126 հազար դրամ, Բյուրեղավանը, Ջերմուկը, Իջեւանը՝ 120 հազար դրամ, Գյումրին՝ 116 հազար դրամ, Եղվարդը՝ 115 հազար դրամ 1 քմ դիմաց:

| Վարչական շրջաններ | Միջին գները (դրամ) | |
|---|---|---|
| | 9 ամիս 2011թ. | 9 ամիս 2012թ. |
| Կենտրոն | 462900 | 461700 |
| Արաբկիր | 373500 | 368200 |
| Քանաքեռ-Զեյթուն | 277800 | 278300 |
| Նորք-Մարաշ | 282700 | 304800 |
| Ավան | 244100 | 256300 |
| Էրեբունի | 240700 | 225300 |
| Շենգավիթ | 241100 | 242900 |
| Դավթաշեն | 271500 | 261300 |
| Աջափնյակ | 236700 | 238000 |
| Մալաթիա-Սեբաստիա | 232900 | 224800 |
| Նուբարաշեն | 150000 | 144600 |
| Միջինը Երեւանում (բացի Նոր Նորքից) | 274000 | 273300 |

Հողի շուկայում հետեւյալ պատկերն է՝ 2012-ի հունվար-սեպտեմբեր ամիսներին 2011-ի նույն ժամանակահատվածի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 9,2 տոկոսով, աճուրդով վաճառքներինը՝ 33,9 տոկոսով: Ընդ որում, Երեւանում աճել է 4,7 անգամ, իսկ մարզերում միասին վերցրած նվազել՝ 36,8 տոկոսով:

Այս տարվա առաջին 9 ամիսներին իրականացվել են հիփոթեքային գրավադրման 976 գործարքներ, որից 604-ը՝ Երեւանում: Հիփոթեքային գրավադրման գործարքներից 83,6 տոկոսն իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 10,3 տոկոսը՝ անհատական բնակելի տների, մնացածը հասարակական նշանակության օբյեկտների, այգետնակների եւ հողերի նկատմամբ: 2011-ի 9 ամիսների համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը նվազել է 43,1 տոկոսով, ընդ որում, Երեւանում՝ 52,4 տոկոսով, մարզերում՝ 16,4 տոկոսով:

Այսպիսով, 2012-ի 9 ամիսներին Հայաստանի անշարժ գույքի շուկան գնային առումով էական փոփոխություններ չի ունեցել, իսկ գործարքների քանակի առումով՝ հիմնականում նվազել:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ

# Բյուջեի քննարկումն այնքան էլ հախուռն չէր, ինչպես որ նախօրոք ենթադրվում էր

*1-ին էջից*

Բագրատյանն առաջարկում էր այլ մեթոդաբանությամբ վերաբաշխել բյուջետային միջոցները՝ այդ ճանապարհով նվազագույն աշխատավարձը բարձրացնելով: Ապա կոչ արեց դեմ քվեարկել այդ նախաձեռնությանը, որի մեջ «ոչ որեւէ լուծում կա, ոչ էլ ինտելեկտ է ներդրված»:

**Արծվիկ Մինասյանն** էլ նշեց, թե այդպիսի օրինագծի ընդունման դեպքում ինքը պատրաստ է հրաժարվել պատգամավորական մանդատից, իսկ նվազագույն աշխատավարձի արժանապատիվ բարձրացում չապահովող եւ դրա համար ընդամենը 17 մլրդ դրամ չգտնող կառավարությանն էլ առաջարկեց, թե «չեք կարողանում՝ դրա ճանապարհը կա, գնացեք, ով կարող է, թող նա գա-անի»:

Բայց դե ընդդիմությունը ունի-չունի, այլընտրանք ԲՀԿ-ի հետ մի 40 ձայն ունի, այնպես որ մնում է ելույթների ինչեղությունը: Սա՝ բյուջեի տրամաբանությամբ երկրորդ ընթերցմամբ քննարկված եւ տեղում ընդունված մի քանի օրենքի մասով: Օրվա վերջում ֆինանսների նախարար **Վաչե Գաբրիելյանը** ներկայացրեց 2013 թ. բյուջեի նախագիծը:

Նախապես ասենք՝ ԲՀԿ-ն, որ սովորաբար սպառնում էր քննադատել բյուջեն, երեկ բյուջեի ներկայացման ավարտից հետո հարցեր ուղղելիս առանձնապես չերեւակվեց: **Միքայել Մելքումյանը** ըստ էության մի քանի հարց տվեց՝ տնտեսագիտական: Հավանաբար ԲՀԿ-ականները զբաղված են նոր իդեա-ֆիքսով՝ խորհրդակցություններ քաղաքական ուժերի հետ անկացնելով խորհրդարանական համակարգի անցնելու վերաբերյալ եւ բյուջեի հետ գլուխ դնելու ժամանակ չունին: Եվ միայն **Օսկանյանն** էր, որ երեկվա նիստի ավարտին գնահատականներ պարունակող հարցեր ուղղեց Վ. Գաբրիելյանին:

Նախագծով բյուջեի եկամուտները կազմելու են 1 տրիլիոն 31 մլրդ 600 մլն դրամ, 13,2 տոկոս ավելի՝ նախորդ տարվա համեմատ: Հարկային եկամուտների եւ պետտուրքի մակարդակը կազմելու է ՀՆԱ-ի 21,8 տոկոսը՝ ավելի նախորդ տարվանից այնքան, որ կունենանք 0,6-0,7 տոկոս աճ: Ծախսերը 1 տրիլիոն 151 մլրդ դրամ, 400 մլն դրամի չափով են, 107,2 մլրդ դրամով անցած տարվա համեմատ դրանք աճել են: Դրանց 83,1 տոկոսն ընթացիկ ծախսերն են, մնացածը՝ կապիտալ ծախսերը՝ 119, 8 մլրդ դրամ, ռիսկերը գնահատվում են ՀՆԱ-ի 1,7 տոկոսը չգերազանցող լրացուցիչ ծախսերով:

Ֆինանսների նախարարը ներկայացրեց բյուջեի գերակայությունները, որ «**Ազգը**» մի քանի անգամ ներկայացրել է, դրանց գումարվում են մշտական խնդիրներ՝ տարածաշրջանում կայունություն ու երկրի տարածքային ամբողջականությունը, ղարաբաղյան հակամարտության ուժերի հավասարակշռությունը պահպանելու ուղղությամբ անհրաժեշտ ֆինանսավորման եւ մակրոտնտեսական կայունության ապահովում:

Ծախսերի կառուցվածքն այս տեսքն ունի . սոցիալական ծախսերի տեսակարար կշիռը ընդհանուր բյուջետային ծախսերի 42 տոկոսն է, պաշտպանության, հասարակական կարգի պաշտպանության եւ ազգային անվտանգության ապահովման ծախսերը՝ 21 տոկոս, տնտեսության ճյուղերը տանելու են 14 տոկոս, պետական պարտքի սպասարկումը՝ 4,5 տոկոս, համայնքներին ուղղված դոտացիաները՝ 3,1 տոկոս: Պետական բյուջեից քաղաքացիների տնօրինած առձեռն եկամտի նվազում չկա:

Կրթության բնագավառի ծախսերը շուրջ 108 միլիարդ են՝ անցած տարվանից ավելի, չնայած աշակերտների թվի նվազում կա: Գիտության ոլորտում վերջնական հստակեցումները պատգամավորների առաջարկներն ամփոփելուց հետո են հայտարարվելու՝ դրանք համապատասխանեցվելու են եկամուտների աճի սահմանաչափին: Առողջապահության ոլորտում շուրջ 70 միլիարդ դրամի ծախս է նախատեսված, սա գերակա ուղղություն է պետության համար՝ որակի եւ մատչելիության նշանի տակ:

Բյուջեն ներկայացնելուց հետո մի քանի պատգամավոր նաեւ հասցրին հարցեր տալ Վ. Գաբրիելյանին: ՀՅԴ պատգամավոր **Արծվիկ Մինասյանը** համառորեն ուզում էր իմանալ, թե որքա՞ն աշխատատեղ է ստեղծվելու 2013-ին, եւ ի վերջո Վ. Գաբրիելյանից պոկեց՝ 10 հազար աշխատատեղ:

**Զարուհի Փոստանջյանն** ուզում էր իմանալ, թե ինչու վարչապետը չի ներկայացնում բյուջեն ու չի պատասխանում պատգամավորների հարցերին: Վ. Գաբրիելյանը, նշելով, որ կառավարությունն է իրավասու որոշելու, թե ով ներկայացնի բյուջեն, միաժամանակ մատնացույց արեց չորեքշաբթի օրվա հարցուպատասխանը, որի ժամանակ պատգամավորը կարող է հարց ուղղել վարչապետին եւ հենց այդպես էլ վարվել է բազմիցս: Փոստանջյանը համամիտ չէր՝ վարչապետը պետք է պատիվ համարի մեկ տարի օգտագործվելիք՝ երկրի գլխավոր ֆինանսական փաստաթղթի ներկայացնելը եւ այդ առթիվ պատգամավորների հարցերին պատասխանելը:

Ասել ենք, Օսկանյանը ԲՀԿ-ից վերջում մի փոքր սրեց, թե ժամանակին ասել ենք՝ կառավարության ծրագրի հետեւը չկա քաղաքականություն, նպատակ եւ այլն, դա արտացոլվել է նաեւ բյուջեում: Ըստ Օսկանյանի՝ բյուջեի միայն քսանհինգ տոկոսն է իրական աճ, սա ինքնահոսի թողնված բյուջե է, կասկածամտությունն ավելի է խորանում, երբ թվերին ենք նայում: Թվերը երկու բյուջեներում (նախորդ եւ ապագա) շատ նման են, եկամուտները չեն աճում, գաղափարախոսություն չկա այս բյուջեի հետեւում: Վաչե Գաբրիելյանը բնականաբար չկիսեց Օսկանյանի տեսակետները՝ գաղափարախոսություն կա բյուջեի հետեւում: Եվ մի քանի թվեր էլ բերեց, որոնցով հակադրվեց Օսկանյանին:

Օսկանյանը մնաց իր կարծիքին՝ սա աճման բյուջե չէ, այնպիսի ոլորտներում են ավելացումները, որոնք աճ չեն խթանում, ավելի շուտ սղաճ են զսպում, մնացել ենք նախկին քաղաքականության վրա, որին էլի Վաչե Գաբրիելյանը համաձայն չէր:

Հավանաբար բյուջեի հանդեպ սուր դիրքորոշումները պետք է հայտնվեն այսօր:

ԱԶԳ

## Ճանաչված տաղանդների կողմից

Աշխարհով մեկ սփռված հայկական համայնքները հավաքականորեն պահպանում են իրենց լեզուն, պատմությունը, ավանդույթները, կրոնը եւ հիշողությունները: Նրանք են, որ անարդարություններին, ցեղասպանության ժխտումներին հակազդում են զանգվածային ցույցերով, եւ նրանք են, որ կարող են որոշակի ուժի ոտքի հանել քաղաքական գործողությունների համար: Ենթադրվում է դրանից, որ ցեղասպանության ժխտման դեմ կամ ճանաչման համար իրագործված զանգվածային գործողությունները կամ պայի այդ մասը աշխարհից կտրված էր եւ այն օրինակը, որ ես ցանկանում եմ մեջբերել այստեղ՝ ընդհանրացնելու համար իմ վերոնշյալ երեւույթը. հենց այդ մասից, իսկ ավելի կոնկրետ՝ Ռումինիայից է:

Բուխարեստում 2006 թվականին հրատարակվել է մի գիրք, որն այժմ մեծ աղմուկ է առաջացնում ամբողջ Լատինական Ամերիկայում: Վեպի վերնագիրն է «Շշուկների մասին» (The Book of Whispers), իսկ հեղինակը՝ **Վարուժան Ոսկանյանը**, որը Ռումինիայի ֆինանսների եւ էկոնոմի- պատկերացնել, թե ինչ պատահեց հետո: Թուրք պաշտոնական անձինք փորձեցին խափանել գրքի հետագա հրատարակությունը, բայց հաջողության չհասան: Նույնը փորձեցին կատարել Լատինական Ամերիկայում, բայց նրանց այդ քայլը հակառակ ազդեցությունն ունեցավ, եւ գրքի ժողովրդականությունը ավելացավ, նույնիսկ հեռուստատեսությամբ ներկայացվեց:

Երբեմն մի գիրք կարող է ավելին անել, քան մի ամբողջ կոմիտե կամ նույնիսկ համայնք:

Այս վեպը հուշագրություն չէ: Ոչ էլ ցեղասպանության իրադարձու- րի մասին, որոնք մեծ մասամբ տեղի են ունենում իր բնակված վայրի՝ Վերմոնտի շրջանում: Բայց Հայոց ցեղասպանության հարցն, ըստ էության, հասունանում էր արյան մեջ, եւ ծագումնաբանական հիշողությունը ի վերջո ծնունդ տվեց իր նորագույն բեսթսելլերին՝ «Ավազե ամրոցի աղջիկները», որն, ըստ իրեն, արտացոլում է իր ներաշխարհը:

Ոչ ոք չի պարտավորեցրել այդ գրողներին եւ արվեստագետներին՝ պաշտպանելու ցեղասպանության ճանաչման հարցը: Նրանք անձնական նախաձեռնությամբ՝ րով օժանդակում է Հայաստանին: Եվ չմոռանանք մտավոր աշխարհից հեռու կանգնած հանրահռչակ **Քիմ Քարտաշյանին**, որն իր սկանդալային պատմություններից անկախ, ապրիլի 24-ին Twitter-ում հայտնվելով, հայտարարեց. «Այսօր մենք պարտավոր ենք միավորվել եւ հիշել այն 1,5 միլիոն հայերին, որոնք կոտորվեցին 1915 թվականի Հայոց ցեղասպանության ժամանակ»: Նրա հայտարարությունը հազարավոր անգամներ կրկնվեց համացանցի գրեթե բոլոր գլխավոր կայքերով եւ հասավ միլիոնավոր մարդկանց:

# «Շշուկներից» դեպի արդարության բարձրագույն պահանջներ

ԵՐՎԱՆԴ ԱԶԱՏՅԱՆ

դրսեւորումները միշտ պետք է գան այդ հայկական համայնքներից: Բայց դա միշտ չէ, որ համապատասխանում է իրականությանը:

Ճիշտ է, մենք կարեւոր քաղաքական ազդեցություն կարողանում ենք արձանագրել, երբ ցեղասպանության հիշատակի արարողություններում հավաքվում ենք, օրինակ, Նյու Յորքի «Թայմս» հրապարակում, բայց պատմությունը մեկից ավելի անգամներ ապացուցել է, որ համաշխարհային մակարդակի արվեստագետներ կամ նշանավոր անձնավորություններ, որոնք քաղաքական գործիչներ չեն, մեծապես նպաստել են ցեղասպանության ճանաչման գործընթացին՝ պարզապես դիպչելով մարդկանց խղճի լարերին:

Ես այս գիտակցությանը հանգեցի՝ վերջերս կարդալով մի գրքի մասին, որը գրված կամ հրատարակված չլինելով ինչ-որ հայկական մեծ մի համայնքում, այդուհանդերձ ստացել եւ շարունակում է ստանալ միջազգային համբավ եւ արժեւորում:

Բայց նախ մի փոքր նախաբան: Մենք հազվադեպ ենք լսում ռումինահայ համայնքի մասին, որը մոտ հազար տարվա պատմություն ունի: Երբ միջնադարյան Անի քաղաքը ասպատակվեց սելջուկների կողմից, տեղի հայ բնակչությունը ցիրուցան եղավ, հաստատվեց Ղրիմում, Արեւելյան Եվրոպայում եւ մասնավորապես Ռումինիայում, Հունգարիայում, Բուլղարիայում: 20-րդ դարի երկրորդ կեսին Եվրո- կայի նախարարն էր: («**Ազգ**»-ը արդեն անդրադարձել է այս գրքին: Խմբ.): Վեպը հիմնված է Եղեռնը վերապրած իր պապի հիշողությունների վրա: Եվ չնայած հեղինակը անթերի տիրապետում է արեւմտահայերենին, նրա գիրքը ռումիներեն է գրված ավելի մեծ թվով ընթերցողների հասու լինելու համար:

Վեպն արդեն իսկ թարգմանվել է եբրայերեն, ֆրանսերեն, բուլղարերեն, գերմաներեն, շվեդերեն, իտալերեն եւ իսպաներեն: Ներկայումս մեծ ժողովրդականություն է վայելում լատինամերիկյան երկրներում: Իսպանախոս հասարակությունը շատ ընդհանրություններ է գտել Ոսկանյանի վեպի եւ կոլումբիացի Նոբելյան մրցանակակիր Գաբրիել Գարսիա Մարկեսի ստեղծագործությունների միջեւ: Ընդհանրությունները հատկապես գրքի միստիկական ոճին են վերաբերում, եւ այդ առթիվ բազմաթիվ հիացական հոդվածներ են հայտնվել լատինական մամուլում:

Կոլումբիական «Լա Սեմանա» թերթին տված հարցազրույցում Ոսկանյանը խոստովանել է, որ ինքը Մարկեսի գործերով հիացողներից է, եւ որ նրա «Հարյուր տարվա մենություն» վեպը համարում է գրականության իր ամենասիրելի ստեղծագործություններից մեկը: Ոսկանյանը վերջերս հրավիրված էր Բոգոտա՝ Կոլումբիայի մայրաքաղաքը, մասնակցելու Մարկեսի պատվին կազմակերպված գրական մի փառատոնի: Ընթերցողը կարող է թյունների պատմություն: Այն ունի գրական լուրջ արժեք եւ գրված է մարկեսյան ոգով: Ոսկանյանի խոսքերով՝ վիպասանի գործը բարոյականություն քարոզելը կամ գրական գործում բարձրացված հարցերի պատասխան տալը չէ: Գրողը պետք է ճշմարտությունը ներկայացնի եւ թողնի, որ ընթերցողը ինքը եզրակացություններ անի:

Ոսկանյանի պարագան միայն մեկն է օրինակներից: Կան նման շատ այլ պարագաներ եւ անհատներ: Սա խոսում է այն մասին, որ պատմագրության մեջ կա մի թաքուն ուժ, խոր թաղված, եւ ոչ ոք չգիտի, թե այդ ուժը երբ եւ ինչպես է մակերես դուրս գալու՝ ներկայացնելու համար հայերի ցավը:

Մեկ ուրիշ օրինակ է **Շառլ Ազնավուրը**, որ համաշխարհային հռչակ ձեռք բերելուց հետո նվիրեց իրեն հայկական քարոզչությանը:

Ո՞վ կմտածեր, որ Պադուայում (Իտալիա) երկրորդ կամ երրորդ սերնդի իտալահայ **Անտոնիա Արսլանը**, համեմատական գրականության այդ պրոֆեսորը երեւան կհանի հայկական ցեղասպանությունը հրաշալի գրական ձեւի մեջ ներկայացնող իր «Արտույտների ագարակը» բեսթսելլերը:

Հաջորդը Ամերիկայում ժողովրդականություն վայելող **Քրիս Բոհջալյանն** է, որն իր վեպերում երբեք չէր անդրադարձել հայկական թեմաներին: Նա գրական համբավ էր ձեռք բերել հիմնականում գրելով մարդկային տարբեր իրավիճակների եւ հանգամանքնե- մարդկային խոր զգացմունքներով ու համոզմունքներով են առաջնորդվում: Այդ զգացմունքները հրաբխի նման ժայթքում են, երբ նրանք ներքին ճշմարտություններին եւ իրենց ձեւավորած անցյալի պատմական փաստերին են առնչվում:

Ամենավառ օրինակը արվեստագետի, որ քաղաքական լուրջ ներդրում է ունեցել, **Սերժ Թանգյանն** է, ժողովրդականություն վայելող «Սիստեմ ըվ է դաուն» խմբի նախկին առաջնորդը եւ այժմ հաջողակ մեներգիչը: Լիբանանահայ ներգաղթյալների զավակը, որ Լոս Անջելեսում է մեծացել, դարձել է շատ երիտասարդների կուռքը: Իր արվեստի հազարավոր երկրպագուների առաջ ելույթ ունենալով՝ նա ինքնաբերաբար արտասանեց «կատարվածը ցեղասպանություն էր» բառերը:

Նյու Յորքի «Մետրոպոլիտեն» օպերայում «Նորմայի» իր աստղային ելույթից հետո, երբ սոպրանո **Հասմիկ Պապյանին** է մոտենում մի լրագրող եւ հարցնում, թե իր արտակարգ տաղանդը ինչի՞ն է վերագրում, նա պարզապես պատասխանում է՝ «Ես հայ եմ»:

Այդ ինքնակամ առաքելությունը հատուկ է նաեւ այլ բնագավառների ներկայացուցիչներին: **Քըրք Քըրքորյանն**, օրինակ, որ երբեք հայկական միջավայրում չէր դրսեւորել իրեն եւ նույնիսկ պատճառ ուներ հայերից նեղանալու, որովհետեւ կրթաթոշակ չէին հատկացրել նրան, այժմ միլիոնավոր դոլարնե-

Ոչ ոք չի կարող շփոթել Քարտաշյանին այնպիսի ականավոր գիտնականների հետ, ինչպիսիք են Վահագն Տատրյանը, Ռիչարդ Հովհաննիսյանն ու Թաներ Աքչամը, սակայն ինչքան էլ տխուր լինի արձանագրել, պետք է խոստովանել, որ նա ավելի շատ մարդկանց է հասու լինում, քան այդ գիտնականներից որեւէ մեկը:

**Շերն**, իր հերթին, 1988-ի ավերիչ երկրաշարժի օրերին մնաց Հայաստանի կողքին եւ կիսեց հայ ժողովրդի ցավն ու տագնապը:

Այս երեւույթին մենք մեկ անգամ չէ, որ դեռ հանդիպելու ենք: Միշտ էլ լինելու են թաքնված «ակտիվիստներ», որոնք պատրաստ են լինելու նպաստել հայկական դատին: Սա իհարկե բախտավորություն է: Սակայն դա բոլորովին չի նշանակում, որ հայ հասարակական կյանքն ու հայկական համայնքները ի վիճակի չեն ծնունդ տալու նման երեւույթների կամ անձնավորությունների: Իհարկե՝ ոչ: Բայց Հայոց ցեղասպանության վերաբերյալ ճշմարտության բացահայտումը միշտ էլ երեւան է գալու հանկարծակի, չակնկալված րոպեների եւ չակնկալված տաղանդների կողմից՝ լուսավորելու համար մեր ապագայի ճանապարհը: Մենք պետք է այն վստահությունն ունենանք, որ Ոսկանյանի վեպի «շշուկները» ժամանակի ընթացքում ուժեղանալու են, դառնալու համաշխարհային արդարության համար բարձրաձայնվող պահանջներ:

Դետրոյթ, ԱՄՆ
Թարգմ.՝ Հ. Ծ.

# Անկյալ դրոշի «ասպետները»

Օրերս Ադրբեջանում նշվել է «պետական դրոշի» օրը: Այդ առթիվ, իհարկե, մամուլը հեղեղված էր բազմաթիվ եւ բազմազան նյութերով: Բոլոր հրապարակումների համար, սակայն, պարտադիր բնաբան էր ընտրվել «իմաստուն» մի ձեւակերպում, որի հեղինակը «համազգային առաջնորդ» Հեյդար Ալիեւն է. «Ադրբեջանի դրոշը սոսկ դրոշ չէ: Դա մեր պետականության, անկախության սիմվոլն է: Այդ իսկ պատճառով Ադրբեջանի յուրաքանչյուր քաղաքացի պետք է դա գիտակցի, գնահատի: Քաղաքացու սերը դրոշի հանդեպ պետք է հավասար լինի հայրենիքի, ժողովրդի, պետության հանդեպ նրա սիրուն»:

«Մառական իմաստնություն» հիշեցնող սույն բառակույտին, ինչպես եւ սպասելի էր, պետական քարոզչությունը փորձել է ինչ-որ «իմաստ» հաղորդել: Բայց «ստացվել է ինչպես միշտ»: Քանի որ ի սկզբանե վերցվել է երկու ակնհայտ կեղծ կանխադրույթ: Առաջինը Հեյդար Ալիեւի անունը բոլոր միջոցներով Ադրբեջանի դրոշի հետ կապելն է: Դրան հասնելու համար «իլհամպրոպ»-ը կարճ անդրադարձ է կատարել պատմությանը եւ նշել, որ ներկա ադրբեջանական դրոշը առաջին անգամ «բարձրացվել է 1918թ. նոյեմբերի 9-ին»: Մինչ այդ «անկախ» Ադրբեջանի դրոշն այլ էր:

Այնուհետեւ պաշտոնական քարոզչամեքենան «ջնջել է» Ադրբեջանի նորագույն պատմության բոլոր կարեւոր իրադարձությունները: Մոռացության է տրվել նույնիսկ, որ 1989թ. նոյեմբերի 9-ին «անկախ» Ադրբեջանի դրոշը 70-ամյա ընդմիջումից հետո բարձրացվել է Բաքվի Լենինի, ներկայիս՝ «Ազադլիգ», հրապարակում, ԱԺՃ առաջնորդ Աբուլֆազ Էլչիբեյի կողմից: Այդ դրոշն, իհարկե, մարդկանց տարել է հակահայկական ջարդերի, խորհրդա-իրանական սահմանի կազմաքանդման, ի վերջո՝ խորհրդային իշխանության դեմ զինված ապստամբության, որն ավարտվել է 1990-ի «սեւ հունվար»-ով: Բայց, հանուն արդարության, պետք է ասվեր ողջ ճշմարտությունը:

«Իլհամպրոպ»-ը, մինչդեռ, «ազգային վերազարթոնքի» պատմության մեկնակետ է հռչակել 1990 թ. հուլիսի 20-ը, երբ «Բաքու է վերադարձել Հեյդար Ալիեւը», իսկ արդեն հուլիսի 22-ին «մեկնել Նախիջեւան»: Որպես Նախիջեւանի ԻՀ Գերագույն խորհրդի նախագահ՝ Հեյդար Ալիեւը «նախաձեռնել, իսկ 1990թ. նոյեմբերի 17-ին Նախ. ԻՀ Գերագույն խորհրդի նստաշրջանը որոշում է ընդունել ԱԴՀ դրոշը Նախիջեւանի ԻՀ պետական խորհրդանիշ ընդունելու մասին»: Եվ միայն դրանից հետո է հարկ համարվել «տողամիջում ասելու», որ 1990թ. նոյեմբերի 29-ին հրամանագիր է ընդունվել (ո՞ւմ կողմից՝ չի ասվում- Վ. Ա.) «Ադր. ԽՍՀ անվանափոխության եւ պետական դրոշի մասին», անցել է եւս 3 տարի, եւ 1993թ. հոկտեմբերի 3-ին Ադրբեջանում տեղի են ունեցել նախագահական ընտրություններ, որոնց արդյունքներով՝ ձայների 99,98 տոկոսով հաղթանակ է տարել Հեյդար Ալիեւը»:

Ոչ մի ակնարկ իսկ այն մասին, որ Հեյդար Ալիեւը Ադրբեջանի... երրորդ նախագահն է եղել, որ նրան նախորդել են Աբուլֆազ Էլչիբեյը եւ Այազ Մութալիբովը: Ուղղակի՝ Հեյդար Ալիեւը Մոսկվայից «վերադարձել է Բաքու, մեկնել Նախիջեւան, դրոշի մասին որոշում ընդունել, 3 տարի անց հաղթել նախագահական ընտրություններում»: Ինչպես Հին Հռոմում, որտեղ նոր բռնապետը կարգադրում էր ոչնչացնել մինչ իր գահակալությունը եղած բոլոր պատմական վկայությունները: Կամ՝ ինչպես Հին կտակարանում Եհովան է ասում. «Ես եմ Ալֆան եւ Օմեգան, սկիզբը եւ վախճանը»:

Նման «բարձր նոտան», իհարկե, չէր կարող չներառել նաեւ ադրբեջանական դրոշի հանդեպ «թշնամանքի», այն «թուլամորթաբար հրկիզելու» եւ այս կարգի այլ «նրբերանգներ»: Անշուշտ՝ հետեւյալ «հերոսական» ընդհանրացմամբ. «Մեզնից յուրաքանչյուրը մի երազանք ունի՝ Ադրբեջանի դրոշը պետք է բարձրանա «Հայաստանի կողմից օկուպացված՝ մեր հայրենիքի տարածքների» (չակերտները մերն են- Վ. Ա.) վրա: Մենք կվերադարձնենք մեր նախնիների հողերը, մենք կբարձրացնենք այնտեղ Ադրբեջանի եռագույն դրոշը: Մենք դրան հավատում ենք»:

Եռա՞, թե՞ երկ կամ միագույն է Ադրբեջանի դրոշը, ի՞նչ է խորհրդանշում՝ «իսլամ, եվրոպեիզմ եւ առաջընթա՞ց», թե՞ սեւ-սպիտակ ոչխարների արշավանքը քաղաքակրթության եւ մշակույթի դեմ կամ, գուցե, վաղն այդ դրոշի վրա «Բոզ գուրդ» նկարվի՝ լուսնահար ոռնոցի պարզված դնչով, մեր խնդիրը չէ: Այդ դրոշը Արցախի վրա երբեք չի ծածանվել եւ չի ծածանվելու: Քանի որ Արցախում մեկ անգամ՝ համաժողովրդական որոշմամբ, պանծացված ՀԱՅԿԱԿԱՆ ԵՌԱԳՈՒՅՆԸ ծածանվում է իր ողջ վեհությամբ: Իսկ անկյալ դրոշի «ասպետներին» խորհուրդ կտանք հաշտ լինել ոչ միայն իրականության եւ իրողությունների, այլեւ ամենից առաջ՝ սեփական պատմության հետ: Լինելիության «ալֆան եւ օմեգան, սկիզբը եւ վախճանը» դա է:

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

# Նոյեմբերի 10-ին՝ Աթաթուրքի մահվան օրը զոհվեց 17 թուրք զինծառայող

*Եթե դրա պատճառը ուղղաթիռի վթարն է, ապա ինչո՞ւ վթարի համար սպառնալ PKK-ին*

Նոյեմբերի 10 ժամանակակից Թուրքիայի հիմնադիր Քեմալ Աթաթուրքի մահվան օրն է: Նա մահացել է 1938-ին, տեղական ժամանակով 9.05-ին, Ստամբուլի «Դոլմաբահչե» պալատում: Շաբաթ օրը թուրքական մասնավոր հեռուստատեսություններից ahaber-ը «Աթաթուրքի մահվան գաղտնիքը» վերնագրով հաղորդում հեռարձակեց: Ըստ հաղորդման՝ Քեմալ Աթաթուրքին անմիջականորեն չեն սպանել, սակայն նպաստել են, որ մահանա՝ ներարկելով նրան այնպիսի դեղեր, որոնք հակացուցված են երիկամների անբավարարվածությանը, ինչը նա ուներ:

Աթաթուրքի բուժումը, հակառակ նրա դժգոհության, բացառապես վստահվել է արտասահմանից հրավիրված բժիշկների: Չնայած մահվան պատճառների մասին վերջիններիս հակասական եզրակացության, մեկը դրա պատճառը համարել է թոքերի ջրից դուրս գալը, իսկ մյուսը՝ լյարդի ցիրոզը, առանց պարզաբանելու, թե ալկոհոլային խմիչքի չարաշահման հետեւանքով է առաջացել, կամ առաջացումը խթանել է մալարիան, դիակի հերձում չի արվել: Փոխարենը մահից հետո Աթաթուրքի բոլոր՝ թղթադրամների եւ դրոշմանիշների վրա տեղադրված նկարները հանվել են: Դրանց խնամքով փոխարինել են «ազգային առաջնորդ» հռչակված եւ շուտափույթ նախագահի պաշտոնում ընտրված Իսմեթ Ինյոնուի նկարները:

Թերեւս կարելի է շրջանցել Քեմալ Աթաթուրքի մահվան օրը՝ պատճառներով հանդերձ, եթե նրա մահվան 74-րդ տարելիցին Սղերդի Փերվարի գավառում խորտակված ռազմական ուղղաթիռում չզոհվեր 17 զինծառայող, եւ խորտակումը սաբոտաժի կասկածներ չառաջացներ:

Ուղղաթիռում զոհվածներից 3-ը սպա են, 4-ը՝ ենթասպա, մնացածները՝ հատուկ նշանակության զորքերի մարտիկներ: Ըստ պաշտոնական վարկածի, օրը եղել է մառախլապատ, ուղղաթիռը դիպչել է ժայռաբեկորին, քանի որ մառախուղը շեղել է օդաչուների ուշադրությունը: Այսինքն՝ ուղղաթիռի խորտակումը, թուրքական զինված ուժերի գլխավոր շտաբի տվյալներով, վթարի հետեւանք է:

Ընդգծելով այդ մասին, «վթարի հետեւանքով խորտակման» պաշտոնական վարկածում միաժամանակ նշվում է, որ զոհվածները օգնության էին շտապում Սղերդի Փերվարի գավառում «երկու օր շարունակ PKK-ի ահաբեկիչների հետ մարտնչող զինակիցներին՝ համալրելու առաջադրանքով»:

Խնդիրը, սակայն, ուղղաթիռում զոհված զինծառայողների առաջադրանքը չէ, այլ վերջիններիս կորուստը վթարով պայմանավորելիս, վթարի համար PKK-ին սպառնալու նախագահի Աբդուլլա Գյուլի գործելակերպը: Նա վթարին արձագանքեց Աթաթուրքի մահվան 74-րդ տարելիցի հանդիսություններին:

Նա մասնավորապես ասաց. «Այսօր մենք, ցավոք, ուղղաթիռի խորտակման պատճառով նոր զոհեր ենք տվել, որոնք իրենց ընկերներին օգնության հասնելու համար անձնազոհաբար անտեսել են անբարենպաստ եղանակը: Նրանք, ովքեր օգտվելով տարածաշրջանում եւ հատկապես հարեւան երկրներում տիրող անկայունությունից, ահաբեկչության միջոցով փորձում են կարգի հրավիրել մեր ազգին ու պետությանը, մեծապես սխալվում են եւ կզղջան դրա համար: Մեր դեմ զենքով դուրս եկողը արժանի հակահարված կստանա: Ունենք դրա անսասան կամքը: Ցավակցում եմ զոհվածների ընտանիքներին, մեր ողջ ազգին եւ թուրքական զինված ուժերին»:

Այլ կերպ, նախագահ Գյուլի ելույթը միանգամայն հակասում է 17 զինծառայողի մահը ուղղաթիռի վթարով պայմանավորելու պաշտոնական վարկածի տրամաբանությանը: Եթե ելույթում խնդիրն առարկան PKK-ի դեմ կռիվներն են եւ կռվողների համալրումը, այդ դեպքում էլ քրդական այս կազմակերպության համար առաջադրանք է դառնում համալրման կանխարգելումը:

Այս ամենի առումով հատկանշական է ազգայնական շարժում կուսակցության նախագահ Դեւլեթ Բահչելիի խոսքերը: Նա թուրքական զինված ուժերի գլխավոր շտաբի եւ վարչապետ Էրդողանի կառավարության ուշադրությունը հրավիրել է վերջին շրջանում հաճախակի դարձած ռազմական ուղղաթիռների վթարի հետեւանքով խորտակման վրա: Այնուհետեւ Բահչելին շարունակել է. «Անբարենպաստ եղանակային պայմաններում նշանակման վայր շտապող զինծառայողների անվտանգությունն ապահովելու անկարողության հարցը լրջորեն պետք է քննարկվի եւ հիմնովին պետք է վերանայվի այս ուղղությամբ իրականացվող աշխատանքների բնույթը: Եվ գլխավորը՝ բացարձակապես չպետք է բացառվի ուղղաթիռի սաբոտաժի, հարձակման եւ անուշադրության հետեւանքով խորտակման հավանականությունը»:

17 թուրք զինծառայողի կյանքը խլած ուղղաթիռը սաբոտաժի ենթարկվե՞լ է, թե՞ ոչ, չգիտենք, բայց որ «հարձակումը» ենթադրում է դրա շարժական զենիթահրթիռային համալիրից արձակված արկով խոցումը, ակնհայտ է: Ի դեպ, վերջերս Թուրքիան այդպիսի համալիրներ տրամադրել էր «Ազատ Սիրիայի բանակի» վարձու մարդասպաններին: Իսկ թուրք դիտորդներից ոմանք դրա առնչությամբ հեռուստաէկրանից մտավախություն էին հայտնել, որ այդ համալիրները շուտով կհայտնվեն PKK-ականների ձեռքում:

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

# ԿՀՎ տնօրենի պաշտոնանկություն սիրուհու պատճառով

ԱՄՆ-ում նախագահական ընտրություններից ընդամենը երկու օր անց՝ նոյեմբերի 8-ին ԿՀՎ տնօրեն Դեւիդ Պետրեուսը հրաժարականի դիմում ներկայացրեց նախագահ Բարաք Օբամային: Օբաման ընդունեց նրա հրաժարականը: Դա լուրջ կորուստ է նախագահի դեռեւս լիովին չձեւավորված նոր վարչակազմի համար, բայց գեներալ Պետրեուսը այլընտրանք չուներ, բացահայտվել էր նրա սիրային կապը իր կենսագիր Պոլա Բրոդվելի հետ:

Վերջին տեղեկությունների համաձայն, ամեն ինչ բացահայտվել էր այն բանից հետո, երբ Բրոդվելը սպառնալիքներ էր հասցեագրել իր մրցակցուհուն՝ գեներալի մյուս սիրուհուն, իսկ նա էլ սպառնալիքների մասին հայտնել էր ՀԴԲ-ին: Այժմ հայտնի է, որ ՀԴԲ-ն (Հետաքննությունների դաշնային բյուրո) ԿՀՎ տնօրենի արտամուսնական կապերի մասին իմացել է դեռ նախագահական ընտրություններից առաջ, բայց չի ուզեցել այդ սկանդալով ազդել ընտրությունների ընթացքի վրա:

Ինչ վերաբերում է Բրոդվելին, նա գեներալ Պետրեուսի հետ ծանոթ է այն պահից, երբ սկսեց աշխատել նրա կենսագրության վրա: Գիրքը լույս տեսավ 2012-ի հունվարին: Բրոդվելն ավարտել է Վեստ Փոյնթի զինվորական ակադեմիան, պահեստի սպա է, ունի ամուսին եւ երկու որդի, նշում է Ռոյթեր գործակալությունը:



Դեւիդ Պետրեուսը ԿՀՎ տնօրենի պաշտոնը զբաղեցնում էր 2011 թ. սեպտեմբերի 6-ից, իսկ դրանից առաջ Աֆղանստանում 1 տարի եղել էր ՆԱՏՕ-ի կոալիցիոն ուժերի հրամանատարը: Չնայած ԿՀՎ մի շարք ձախողումներին, մասնավորապես Լիբիայում այս տարի ԱՄՆ դեսպանի սպանությանը, նախագահ Բարաք Օբաման գեներալի հրաժարականի դիմումն ընդունելիս նրան շնորհակալություն է հայտնել «ակնառու ծառայության» համար:

ՔԱԹԱՐ

# Սիրիական ընդդիմությունը միավորվում է

*ԱՄՆ-ը կաջակցի «Սիրիական ազգային կոալիցիային»*




**Սիրիացի ապստամբները եւ նրանց համակիրները կիրակի օրը Քաթարի մայրաքաղաք Դոհայում համաձայնագիր են ստորագրել «Սիրիական ազգային կոալիցիայի» ստեղծման վերաբերյալ, ինչպես նաեւ ընտրել են նոր միավորման ղեկավար: Դա հոգեւորական Ահմեդ Մուազ ալ Խաթիբն է: Ֆրանսպրեսը հաղորդում է, որ նա ծնունդով Դամասկոսից է եւ երեք ամիս առաջ է հեռացել Սիրիայից:**

**«Սիրիական ազգային կոալիցիայի» կազմում ընդգրկվել են ընդդիմության զանազան կազմակերպություններ, որոնց մեջ ամենահայտնին «Սիրիայի ազգային խորհուրդն» է: «Ֆիգարո» թերթը տեղեկացնում է, որ կոալիցիային հարել են նաեւ «Ներքին գործերի համակարգման կոմիտեները», «Մահմեդական գիտնականները», ռազմական կազմավորումներ եւ այլն:**

**Ավելի վաղ՝ ուրբաթ օրը «Սիրիայի ազգային խորհուրդը վերակազմվել էր. խորհրդի նոր նախագահ էր ընտրվել քրիստոնյա Ժորժ Սաբրան:**

**Ինչ վերաբերում է նորաստեղծ «Սիրիական ազգային կոալիցիային», դրա փոխնախագահներ են ընտրվել այլախոհ Ռիադ Սեյֆը եւ կին ընդդիմադիր Սուհար ալ Աթասին:**

**Ստորագրված համաձայնագիրը նախատեսում է, որ «Սիրիական ազգային կոալիցիան» բաց կլինի բոլոր ընդդիմադիր խմբերի համար եւ միջազգային ճանաչում ստանալուց հետո կկազմավորի Սիրիայի ժամանակավոր կառավարություն:**

**Միացյալ ընդդիմության նոր մարմինը կհամակարգի ապստամբների ռազմական գործողությունները Սիրիայի կառավարական զորքերի դեմ եւ ըստ ամենայնի կնպաստի Բաշար Ասադի վարչակարգի տապալմանը:**

**Երեկ ԱՄՆ պետդեպարտամենտը հայտարարել է, որ կաջակցի ընդդիմադիր «Սիրիական ազգային կոալիցիային»: Ասոշիեյթեդ պրես գործակալությունը հաղորդում է, որ համապատասխան հայտարարություն է արել գերատեսչության ներկայացուցիչ Մարկ Թոները:**

**Թոների խոսքերով, ԱՄՆ-ը ընդդիմադիրներին շնորհավորում է միավորվելու առթիվ եւ պաշտպանում է նրանց կոալիցիան, քանի որ դրա նպատակներն են «Բաշար Ասադի արյունալի կառավարման վերացումը եւ խաղաղ, արդար, ժողովրդավարական ապագայի սկզբնավորումը, որին արժանի է Սիրիայի ժողովուրդը»:**

# Հունաստանն ընդունեց 2013-ի բյուջեն

**Հունաստանի խորհրդարանը, շենքի մոտ հավաքված մոտ 15 հազար ցուցարարների դժգոհությանը հակառակ, ընդունել է 2013-ի բյուջեն: Դրանով իսկ Աթենքը կատարել է միջազգային օգնության համար անհրաժեշտ գլխավոր պահանջը, նշում է Ռոյթեր գործակալությունը:**

**«Ուոլ Սթրիթ ջորնըլ» թերթը գրում է, որ նոր բյուջեն հաստատվել է 167 «թեր», 128 «դեմ» եւ 4 «ձեռնպահ» քվեներով: Փաստաթղթով նախատեսվում է պետական ծախսերը կրճատել 9,4 մլրդ եվրոյով:**

**Սպասվում է, որ ձեռնարկված միջոցների շնորհիվ 2013-ին բյուջեի պակասորդը կկրճատվի եւ կհասնի ՀՆԱ 5,2 տոկոսին՝ ներկայիս 6,6 տոկոսի դիմաց:**

**Նոյեմբերի 12-ին Եվրոմիության երկրների ֆինանսների նախարարների հանդիպման ժամանակ հաստատվել է Հունաստանին 31,5 մլրդ եվրո օգնություն հատկացնելու խոստումը:**

**Ավելի վաղ՝ նոյեմբերի 7-ին Հունաստանի խորհրդարանը հաստատել էր մինչեւ 2016 թվականը ծախսերի 18,5 մլրդ եվրո կրճատում իրականացնելու գործողությունների ծրագիրը: Այն նախատեսում է կենսաթոշակային տարիքը հասցնել 67-ի, պետական հատվածում իջեցնել նվազագույն աշխատավարձը եւ վերացնել սոցիալական արտոնությունների մի մասը:**

# BBC-ի գլխավոր տնօրենը հեռացավ սկանդալի պատճառով

**Բրիտանական BBC եւ Sky News հեռուստաալիքները հաղորդում են, որ BBC-ի գլխավոր տնօրեն Ջորջ Ֆինտուիսլը հրաժարական է տվել մանկապղծության հետ կապված երկու սկանդալների պատճառով: «Ֆիգարո» թերթի կայքէջը հավելում է, որ երեկ գլխավոր տնօրենի օրինակին հետեւելով՝ իրենց պաշտոնները թողել են BBC-ի լրատվության գծով տնօրեն Հելեն Բոուդենը եւ նրա տեղակալ Ստեֆեն Միտչելը:**

**Այս հրաժարականները տեղի են ունենում BBC կորպորացիայում պայթած երկու սկանդալների պատճառով: Մեկը կապված է խմբագրականների բաժնի նախկին գլխավոր հաղորդավար Ջիմմի Սեւիլի հետ, որն ամբաստանվում է անչափահասների հանդեպ սեռական ոտնձգությունների մի շարք դեպքերի համար: Մյուս սկանդալը կապված է պահպանողական նախկին բարձրաստիճան գործիչներից մեկի հասցեին BBC-ի եթերից հնչեցված «մանկապղծության զրպարտական մեղադրանքի» հետ:**

# «Քսաներորդ դարը» Հակոբ Գույումճյանի կատարմամբ

Քսաներորդ դար: Գիտության բազմաթիվ նվաճումներով հագեցած, բայց նաեւ մարդկությանը անասելի դժբախտություններ մատուցած մի ժամանակաշրջան, որի վայրիվերումներին անդրադարձել են մեր անզուգական բանաստեղծները՝ Սեւակ, Չարենց, Թեքեյան, Սահյան, Կապուտիկյան, Դավթյան, Էմին եւ այլք:

ՀՀ մշակույթի նախարարության հրավերով, Երեւանում գտնվող լիբանանահայ վաստակավոր ասմունքող Հակոբ Գույումճյանը, որ վաղը՝ չորեքշաբթի նոյեմբերի 14-ին Երեւանի Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը հանդես է գալու վերոնշյալ բանաստեղծների ստեղծագործություններից մի հրաշալի փնջի մենակատարմամբ, ընտրել է «Քսաներորդ դար...» խորագիրը եւ հավատացած է, որ ի հակադրություն Սփյուռքի, Հայրենիքում դեռ բարեբախտաբար կան մարդիկ, որոնք «բանաստեղծությունը ըմբոշխնում են եւ կատարողական արվեստը՝ գնահատում»:




Գույումճյանը բավական վաղ է սկսել ասմունքել: Դեռեւս փոքր տարիքից, իր իսկ խոսքերով, «հատուկ սեր եւ հակում ունեցած եմ գրականության, հատկապես բանաստեղծության եւ անոր մեկնաբանման հանդեպ»: Իսկ 1966-1971 թթ. Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտում ճարտարապետություն ուսանելու տարիներին ասմունքի հայրենի վարպետներին ունկնդրելը եւ հետագայում նրանց հետ բեմ բարձրանալը զգալիորեն բարեփոխել են ասմունքի հանդեպ նրա վերաբերմունքը, նպաստել ընդունակությունների առավել բացահայտմանը եւ այդ ասպարեզին անվերապահ նվիրվելու հոգեկան բավարարվածությանը:

Նրա մասին գրված դրվատանքի բազմաթիվ խոսքերից առանձնացնենք մի քանիսը - թատերագետ, ակադեմիկոս **Լեւոն Հախվերդյան**. «Արվեստագէտը բնորոշելու համար պէտք է գտնել նրա ամէնից յատկանշական գիծը, դա կեանքի դրամատիկական զգացողութիւնն է, ուրիշ խօսքով՝ կեանքի աններդաշնակութեան սուր, ցաւագին զգացողութիւնը: Յակոբ Գույումճեանն աւելի քան մէկուկէս ժամ լարուած պահեց ունկնդիր հասարակութիւնը» (Կահիրէ, «Արեւ» օրաթերթ, դեկտ. 22, 1984 թ.): Փիլ. գիտ. դոկտ. Գեւորգ Խրլոբյան. «Կատարման տպաւորչականութիւնը բխում էր երկի ներքին տրամաբանութիւնից, որի ճիշդ մեկնաբանումի ու վերլուծումի վրայ էր նա դրել շեշտը: Յակոբը գնում էր տրամաբանութիւնից, իմացական արժէքից դէպի զգացմունքայնութիւն եւ ոչ հակառակը, կատարումը ծալք առ ծալք բացայայտում էր երկի գեղագիտական հարստութիւնը, յաճախ ունկնդրին դնելով նոր յայտնագործումների դէմ յանդիման» (Լոս Անջելես, «Մասիս», նոյեմբեր 9, 2002 թ.):

Արձակագիր **Սարգիս Վահագն**. «Արուեստագէտ ասմունքողին ճարտարութիւնն ու անոր ապրուած, ներշնչուած հոգին բառերուն եւ պատկերներուն... երեկոն վերածեցին հոգեկան խրախճանքի եւ վայելքի... կարեւորը այն էր, որ տրուածը իրագործուեցաւ արուեստով, ապրումով եւ սլացքով: Պարզ, անսեթեւեթ կեցուածքով, մաքուր առոգանութեամբ եւ հայերէնին զոյգ հատուածներուն արժանավայել ինչականութեամբ: Բազմածալք խռովքով, եւ մանաւանդ՝ նուրբ երանգաւորումով եւ այլազանութեամբ (Լոս Անջելես, «Նոր օր», հոկտեմբեր 26, 2002 թ.):

Հակոբ Գույումճյանի ասմունքային առաքելությունների նպատակն է աշխարհին սպառնացող գլոբալիզացիայի եւ ռոբոտայնության պայմաններում մարդկանց տոգորել մարդկության գաղափարներով, մարդկային, հոգեւոր արժեքների պահպանումը հնարավորինս երկարաձգելու գիտակցության կարեւորությամբ:

Նա բծախնդիր է բանաստեղծությունների ընտրության հարցում եւ գիտի հմտորեն շաղկապել մեկը մյուսի հետ: Ինքը եւս բանաստեղծ է եւ ունի «Հոգեհատոր» ժողովածու, որ իր վերնագրին պես, ինչպես ինքն է բնորոշում, «հոգեհատոր էլ մնաց»՝ լինելով միակը:

Սակայն նրա ելույթները տեղի են ունեցել ամենատարբեր հայկական համայնքներում՝ Բեյրութում, Հալեպում, Ամմանում, Կահիրեում, Նիկոսիայում, Գլենդելում, Տորոնտոյում, Մոնրեալում եւ անշուշտ Երեւանում, որտեղ անցյալում մաս է կազմել Ֆիլհարմոնիայի «Հայ համերգ» գեղարվեստական խմբին, արձանագրություններ կատարել Հայպետռադիոյի եւ սփյուռքահայության համար կատարվող հաղորդումների համար:

Վաղվա ելույթի ժամանակ նա պատրաստվում է «արկածախնդրության» գնալ (իր խոսքն է) եւ Սայաթ-Նովա կարդալ Թիֆլիսյան բարբառով: Հաջողություն մաղթենք նրան, իսկ ունկնդիրներին՝ բարի վայելում:

ՀԱԿՈԲ ԾՈՒԼԻԿՅԱՆ

# Մեծ հաղթանակ՝ «Edison Award» մրցանակաբաշխությանը

Գուրջիեւի անվան ժողովրդական նվագարանների համույթի ձայնասկավառակը այս տարվա հոկտեմբերին նոմինացվել է աշխարհի ամենահեղինակավոր մրցանակաբաշխություններից մեկի՝ հոլանդական «Edison Award»-ի «Լավագույն ժողովրդական ալբոմ» անվանակարգում եւ նոյեմբերի 5-ին ճանաչվել՝ անվանակարգի հաղթող երաժշտական նախագիծ:

Մրցանակն աննախադեպ հաղթանակ է, քանի որ «Edison Award»-ը հանդիսանում է աշխարհի 4 ամենահեղինակավոր մրցանակաբաշխություններից մեկը եւ իր հեղինակությամբ ու կարեւորությամբ համեմատվում է ամերիկյան «Grammy Award», գերմանական «Preis der Schallplayyenkritik» եւ ֆրանսիական «Victoire» երաժշտական մրցանակաբաշխությունների հետ: Այս մասին է վկայում թեկուզ այն փաստը, որ 1960 թվականին ստեղծված այդ մրցանակաբաշխության պատվո կոչումներին արժանացել են այնպիսի հեղինակավոր ստեղծագործողներ, ինչպիսիք են համաշխարհային երաժշտարվեստի պսակ հանդիսացող արվեստագետներ Շառլ Ազնավուրը, Մայլս Դեյվիսը, Էմիլոու Հարրիսը, Էրիկ Քլեփտոնը, Բոբ Ջեյմսը, Ֆիլ Քոլինսը, Ռայ Քուդերը, Սթիվի Ուանդերը, Ռոբի Ուիլիամսը, Վալերի Գերգիեւը, Եվգենի Կիսինը, Կլաուդիո Արաուն, Պիեռ Բուլեզը եւ այլոք:

Մրցանակաբաշխությունն առաջնորդվում է ամենաբարձր չափանիշներով՝ մրցանակներ շնորհելով միայն «բացառիկ արժեք ներկայացնող ձայնասկավառակների»:

Մրցանակաբաշխությունն այս տարի տեղի է ունենալու նոյեմբերի 28-ին, հոլանդիայի Այնդհովեն քաղաքի «Ֆիլիպս» համերգասրահում, որտեղ էլ մրցանակը կհանձնվի Գուրջիեւի անվան ժողովրդական նվագարանների համույթի հիմնադիր եւ գեղարվեստական ղեկավար Լեւոն Էսկենյանին:

Հաղթանակած ձայնասկավառակը, որ ներկայացնում է հայազգի փիլիսոփա, երաժիշտ, պարուսույց, գրող Գ. Ի. Գյուրջիեւի երաժշտության ժողովրդական գործիքների համար արված մշակումներ, թողարկվել է 2011 թվականի հուլիսին՝ գերմանական հեղինակավոր «ECM Records» ընկերության կողմից:

Էդիսոնի մրցանակը հրատարակության միակ հաջողությունը չէ, քանզի թողարկման օրվանից այն բազմիցս արժանացել է տարբեր մրցանակների, երաժշտական աշխարհի ջերմ ընդունելությանը, ինչպես նաեւ համաշխարհային մամուլի ամենաբարձր գնահատանքին:

Այսպես, 2012 թվականին Հայաստանի «Ազգային երաժշտական մրցանակաբաշխությանը» ալբոմը ճանաչվեց որպես տարվա լավագույն ժողովրդական ալբոմ, իսկ հրատարակության մասին ակնարկներ ու հոդվածներ հայտնվեցին այնպիսի հեղինակավոր պարբերականների էջերում, ինչպիսիք են «BBC Music Magazine»-ը, «The Guardian»-ը, «The Financial Times»-ը, «The Independent»-ը, «USA National Public Radio»-ն, «NPR Music»-ը, «Mitteldeutsche Zeitung»-ը, «LUnita»-ն, «LA LIBERT»-ն, «The Wire»-ը: Ավելին, Ավստրալիայի պետական ռադիոն՝ «ABC»-ն, 2011 թվականի սեպտեմբերին ձայնասկավառակը ճանաչեց շաբաթվա լավագույն ալբոմ, իսկ 2012 թ. հունվարին ամերիկյան «Q2» դասական երաժշտության ռադիոընկերությունն այն անվանեց շաբաթվա լավագույն CD-ալբոմ:

Ձայնասկավառակում Գուրջիեւի մեղեդիները հնչում են Գուրջիեւի անվան ժողովրդական նվագարանների համույթի կատարմամբ, որը հիմնադրվել է 2008 թ. Լեւոն Իսկէնեանի կողմից: Համույթում ընդգրկված են Հայաստանի լավագույն երիտասարդ կատարողներ: Անցած ողջ տարվա ընթացքում համույթը բազմաթիվ ելույթներով շրջագայել է աշխարհի տարբեր երկրներով՝ հանդես գալով Շվեցարիայի, Իտալիայի, Գերմանիայի, Ռուսաստանի, Բելգիայի, Լեհաստանի ամենահեղինակավոր բեմահարթակներից ու փառատոներում:

ՀԱՆԴԻՊՈՒՄ-ԴԱՍ ՎԱՐՊԵՏԻ ՀԵՏ

# Ա. Փելեշյան. «Կինոն սինթետիկ արվեստ չէ, այլ՝ ինքնուրույն»

Երեւանի թատրոնի եւ կինոյի պետական ինստիտուտում տեղի ունեցավ մեծ կինոռեժիսոր **Արտավազդ Փելեշյանի** վարպետության դասը: Դահլիճը լի էր ուսանողներով, դերասաններով, արվեստասեր հասարակությամբ, նույնիսկ կանգնելու տեղ չկար: Ա. Փելեշյանն իր «Սկիզբ» եւ «Մենք» ֆիլմերով ապացուցեց, որ առանց տեքստի էլ կինոն կարող է դառնալ գեղարվեստական բարձրագույն արժեք: Քանակապես շատ չեն Արտավազդ Փելեշյանի նկարահանած ֆիլմերը, սակայն դրանցից «Սկիզբ», «Մենք», «Տարվա եղանակները», «Բնակիչները» որպես դասագիրք տարիներ շարունակ տարբեր երկրներում ուսուցանում են ապագա ռեժիսորներին: Ա. Փելեշյանի վարպետաց դասը կարծես տոն էր բոլորի համար՝ ուսանողից մինչեւ արվեստագետ:



Հանդիպումը ուղեկցվեց հարց ու պատասխանով, որի ընթացքում մի հանդիսական, հիշատակելով վարպետի խոսքը, թե իր ֆիլմերը երկար կապրեն, քանի որ դրանք լի են սխալներով, հարցրեց. «Ուզում եմ հասկանալ, թե ի՞նչ սխալների մասին է խոսքը»: Փելեշյանը զարմացած պատասխանեց. «Ի՞նչ պիտի հասկանաք, արդեն ամեն ինչ ասված է»:

Վարպետը երիտասարդ ռեժիսորներից մեկին էլ խորհուրդ տվեց չվախենալ ոչ մի բանից, իսկ առաջին ֆիլմի մեջ ներդնել ամեն ինչ, որն էլ որոշելու է իրենց ապագան:

«Վաղուց պատրաստ է «Homo Sapiens»-ի սցենարը, որը ֆինանսական խնդիրների պատճառով ֆիլմ չի դառնում: 1989-ին Մոսկվայի պետկինոն այդ սցենարը ընդունեց պետպատվեր, սակայն ԽՍՀՄ-ը փլուզվեց եւ ֆիլմ չնկարահանվեց», ասաց Ա. Փելեշյանը:

Ի պատասխան այս հայտարարության ներկաներից մեկն ասաց, որ ըստ ԶԼՄ-ներում շրջանառվող լուրերի, Հայաստանի ազգային կինոկենտրոնը պատրաստ է գումար տրամադրել ֆիլմի նկարահանման համար, պակասում է միայն Փելեշյանի նախաձեռնությունը: Ցնցվեց վարպետը եւ ասաց. «Բա ինձ ինչո՞ւ չեն ասում...»: Փելեշյանը կես-կատակ, կես-լուրջ ասաց նաեւ, որ «Homo Sapiens»-ն արդեն տեսել է, եւ ցանկանում է, որպեսզի հանդիսատեսը եւս տեսնի. «Եթե հաջողվի այդ ֆիլմը նկարահանել, ապա իմ մնացած գործերը փոքրիկ էսքիզներ կթվան «Homo Sapiens»-ի առջեւ»:

Կինոն համարում են սինթետիկ արվեստ, բայց ոչ Փելեշյանը: Նրա կարծիքով կինոն սինթետիկ արվեստ չէ, այլ՝ ինքնուրույն, որը չի խմում ո՛չ գրականության, ո՛չ երաժշտության, ո՛չ կերպարվեստի ջրերը, կինոն խմում է այն ջրերը, որտեղից խմում են ե՛ւ գրականությունը, ե՛ւ երաժշտությունը, ե՛ւ կերպարվեստը:

Կոմպոզիտոր **Տիգրան Մանսուրյանն «Ազգի»** հետ զրույցում ասաց. «Արտավազդ Փելեշյանի Երեւանում գտնվելն անշուշտ իրադարձություն է, եւ մեծ հուզում եմ ապրում նրա աշխատանքներն ամեն անգամ դիտելիս: Ա. Փելեշյանը բացառիկ երեւույթ է, նա մարդու արժեքը մի քանի միավորով ավելացնում է, այն դեպքում, երբ մարդու փլուզումն ու արժեզրկումն է տեղի ունենում այժմ, սակայն նա իր արվեստով բարձացնում է այն: Ուրախ եմ նման եղբայր ունենալու առթիվ, որն ասում է՝ մենք հպարտ ենք, որ հայ ենք»:

«Փելեշյանի ֆիլմերը միանշանակ պատկերային պոեզիաներ են, այլ բացատրություն չկա», այսպես է կարծում ռեժիսոր **Հայկ Օրդյանը**, որը **«Ազգի»** հետ զրույցում ավելացրեց. «Փելեշյանի ֆիլմերը հոգեւոր աշխարհ է բացում, որի մեջ ամեն մեկը պետք է ինչ-որ բան գտնի: Ինչպես կարդում ենք այս կամ այն պոետի ստեղծագործությունը եւ ամեն մեկս յուրովի ենք ընկալում, այդպես էլ Փելեշյանն է, ուղղակի նրա գործիքն է ուրիշ: Նրա ֆիլմերը այնպիսի տպավորություն թողեցին ինձ վրա, որ ես ֆիլմ նկարահանեցի Փելեշյանի մասին՝ «Կինոպոետը» վերնագրով: Երջանիկ եմ, որ նրա ժամանակակիցն եմ»: Նշենք, որ ֆիլմից անձնականի մասին մի քանի կտոր է հանվել վարպետի խնդրանքով, սակայն ինչպես Հ. Օրդյանն ասաց, վարպետն իր հավանությունը տվել է ֆիլմին:

Հանդիպման ավարտին Ա. Փելեշյանն ուսանողներին բացահայտեց տարածական մոնտաժի գաղտնիքը՝ «Ֆիլմերի մոնտաժը համարվում է պատկերների միացումը: Իմ ֆիլմերում օգտագործում եմ մեկ այլ մոտեցում՝ կադրերի միացումն ինձ չի հետաքրքրում, այլ իրարից բաժանելը, հեռավորության վրա դնելը՝ օգտագործելով ուրիշ պատկերներ: Ըստ իս հեռավորության վրա գտնվող լիցքավորված պատկերներն իրար մեջ ավելի ուժեղ են խոսում եւ ոչ միայն իրար մեջ են խոսում, այլ դրանք խոսում են մեջտեղում ընկած բոլոր պատկերների հետ»:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

# Ավարտվեց անիմացիոն տոնը

**Ահա եւ ավարտվեց անիմացիոն տոնը Երեւանում: «ՌեԱնիմանիա» միջազգային անիմացիոն 4-րդ կինոփառատոնը այս տարի հյուրընկալեց անիմատորների Բրազիլիայից, Գերմանիայից եւ Ռուսաստանից, որոնք տեղական ժյուրիի հետ որոշեցին այս տարվա հաղթող ֆիլմերը, ինչպես նաեւ անցկացրեցին սեմինարներ ու վարպետության դասընթացներ: Այս տարի փառատոնին ներկայացվել է մոտ 400 ֆիլմ՝ աշխարհի չորս տասնյակից ավելի երկրներից:**

**Փառատոնի հաղթող ֆիլմերն են. լիամետրաժ մրցութային ծրագրում «Մարդկային ողբերգություն», կարճամետրաժ մրցութային ծրագրում «Չինտի», ավարտական մրցութային ծրագրում «366 օր», հեռուստատեսային գովազդ մրցութային ծրագրում «Կանգնելով հանուն ազատության», մանկական ժյուրիի ընտրություն՝ «Հանդուրժիր ինձ», երաժշտական մրցութային ծրագիր՝ «Դաշնամուրի ոգիները» ֆիլմերը:**

Ս. Հ.

# Թոռնիկներն ընդդեմ պապիկների

## *Վետերան շախմատիստների եւ մանկապատանեկան ուժեղ թիմի մրցաշար՝ նվիրված Հակոբ Մոկացյանին*

Երեւանի շախմատի կենտրոնական տունը այս օրերին մեղվանոցի է նման։ Զանազան մրցաշարեր, միջոցառումներ, բազմաթիվ երեխաներ... Չեն մոռացվում նաեւ վետերան շախմատիստները։ Շախմատի տան ղեկավարությունը եւ Վետերան շախմատիստների խորհուրդը, որի նախագահն է Հայաստանի շախմատային ֆեդերացիայի նախագահության անդամ, Շախմատի թանգարանի հիմնադիր Ռաֆայել Չատինյանը, հաճախակի են կազմակերպում վետերանների մրցումներ, հանդիպումներ, մեծարումներ՝ արժանին հատուցելով այն մարդկանց, որոնցից, փաստորեն, սկիզբ է առել հայկական շախմատային ներկայիս հրաշալի մակարդակը։



*Խաղում են ամենատարեցը եւ ամենակրտսերը։*

Շաբաթ օրվա մրցաշարը նվիրված էր հայկական շախմատի երախտավորներից Հակոբ Մոկացյանի հիշատակին։ Մոտ քառորդ դար ղեկավարելով իր իսկ եռանդուն մասնակցությամբ 1963-ին հիմնադրված՝ հանրապետության շախմատի առաջին մասնագիտացված դպրոցը, որը հիմա կոչվում է Հենրիկ Գասպարյանի անվան շախմատի եւ շաշկու օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոց, Հայաստանի վաստակավոր մարզիչ, սպորտի վաստակավոր գործիչ Հակոբ Մոկացյանը հայկական շախմատային բուրգի հիմքերը կառուցողներից մեկը եղավ։ Հայաստանի ուժեղագույն շախմատիստների մեծ մասը անցել է այդ դպրոցով, իսկ Հակոբ Մոկացյանի անմիջական սաներից շատերն են ճանաչման արժանացել, մասնավորապես՝ հայտնի գրոսմայստերներ Ռաֆայել Վահանյանը եւ Սմբատ Լպուտյանը ներկա էին եւ հետեւում էին սերունդների մրցավեճին։

10 վետերան շախմատիստներ, որոնց մեջ էին Հայաստանի նախկին չեմպիոններ, վարպետներ, վարպետության թեկնածուներ, հանդիպեցին շախմատային դպրոցների սաներից կազմված ուժեղ տասնյակին։ Կյանքի հակադիր բեւեռների՝ 10-16 տարեկանների եւ 7-8-րդ տասնամյակներում հայտնվածների մրցաշարն անցավ 10 խաղափուլով. յուրաքանչյուր մասնակից խաղաց մրցակից թիմի բոլոր շախմատիստների հետ, բավական խիստ ժամակարգով՝ 5 րոպե, ամեն քայլի համար 5 վայրկյան հավելումով։ «Պապիկների եւ թոռնիկների» անչափ հետաքրքրական մրցավեճում ընդհանուր հաշվով հաղթեց մանկապատանեկան թիմը՝ 53,5-46,5։ Այնուամենայնիվ, վետերանների մեջ էլ իր խոսքն ասող եղավ։ Անհատական հաշվարկով լավագույն արդյունք ցույց տվեց միջազգային վարպետ Էդուարդ Մնացականյանը՝ 10 հնարավորից 9 միավոր վաստակելով։ Վետերաններից 2-րդ տեղը գրավեց Ադոլֆ Դեմիրխանյանը (նկարում), 3-րդ տեղը՝ Անուշավան Առաքելյանը։

Կրտսեր շախմատիստների մեջ 8 միավորով առաջին տեղը գրավեց Սարգիս Մանուկյանը։ 2-4-րդ տեղերը 7,5-ական միավորով բաժանեցին Նորայր Թորոսյանը, Հարություն Բարսեղյանը, Արամ Հակոբյանը։

Ընդհանրապես, երեխաները, եթե կարելի է այդպես անվանել ահեղ մրցակիցներին, աչքի ընկան գրագետ, համարձակ եւ հետեւողական խաղով, նաեւ, ոչ պակաս ուրախալի, կիրթ պահվածքով, նկատելիորեն տարբերվելով երեւանյան իրենց շատ հասակակիցներից։ Իզուր չէ, որ շախմատը մտքի եւ հոգու լավագույն դաստիարակներից է համարվում։ Այս առումով նույնպես շախմատային դպրոցը մեծ գործ է անում։



Հաճելի էր տեսնել, թե ինչպես 10-ամյա տղան, հուզմունքն ու ինքնադժգոհությունը զսպելով ու թաքցնելով, ձեռք է մեկնում եւ շնորհավորում իրեն հաղթող պատկառելի վետերանին, կամ՝ մեկ ուրիշը ճշգրիտ հաշվարկով զինվորը վերածում է թագուհու, միայն թե պիտի ձգվեր՝ աթոռից կիսաբարձրանալով, որ ձեռքը հասներ ութերորդ հորիզոնականին։

Հայաստանի շախմատային ֆեդերացիայի փոխնախագահ, գրոսմայստեր Սմբատ Լպուտյանը ամփոփեց եւ գնահատեց միջոցառումը՝ ուշադրություն դարձնելով հատկապես «մեր շախմատային ապագայի»՝ կրտսեր շախմատիստների խաղին։

Հանդիպման կազմակերպիչներին եւ մասնակիցներին շնորհակալական խոսքով դիմեց Հակոբ Մոկացյանի որդին՝ Արսեն Մոկացյանը։

ՊԱՐՈՒՅՐ ՀԱԿՈԲՅԱՆ

# «Շիրակը» գլխավորեց աղյուսակը

Ֆուտբոլի ՀՀ առաջնության 29-րդ տուրում կայացավ 2 առաջատարների վճռորոշ մրցավեճը։ Գյումրիում «Շիրակը» 3-0 հաշվով հաղթեց աղյուսակը գլխավորող «Միկային» ու շրջանցելով առաջատարին, զբաղեցրեց 1-ին հորիզոնականը։ Գյումրեցիների հաղթանակի հիմքը դրեց Լեւոն Փաչաջյանը, որի սրընթաց ճեղքումն ավարտվեց գոլով։ Դա «Շիրակի» կազմում Փաչաջյանի առաջին գոլն էր։ Թիմի հաղթանակն ամրապնդեցին Լամին Լի Յորոյի եւ Անդրանիկ Բարիկյանի խփած գնդակները։

3-րդ տեղին հավակնող 3 թիմերն էլ այս տուրում հաջողության հասան։ «Իմպուլսը» Երեւանում 3-2 հաշվով պարտության մատնեց հետնապահ «Բանանցին»։ Դիլիջանցիներից գոլերի հեղինակներ դարձան Դիեգո Կաստրոն, Նորայր Գյոզալյանը (11 մ) եւ Եղիշե Վարդանյանը։ «Բանանցից» աչքի ընկան Կարեն Հարությունյանը եւ Արտակ Դաշյանը (11 մ)։

«Գանձասարը» բավականին հաջող է խաղում Կապանում, որտեղ անցկացրած վերջին 3 խաղերում էլ հաղթել է։ Այս անգամ դաշտի տերերը 2-0 հաշվով պարտության մատնեցին «Արարատին»։ Թիմի հաղթանակն ապահովեցին Ռեջիլիո Զեեդորֆի եւ Դիեգո Լոմբայի խփած 2 գոլերը։

Որոշ ընդմիջումից հետո «Փյունիկի» ֆուտբոլիստների գործողություններն «Ուլիսի» հետ խաղում կրկին ղեկավարեց Վարդան Մինասյանը, որը ժամանակավորապես փոխարինել է աշխատանքից ազատված Սուրեն Չախալյանին։ Մինասյանի վերադարձը հաջող ստացվեց։ «Փյունիկը» 3-1 հաշվով հաղթեց «Ուլիսին»։ Փյունիկցիներից գոլերի հեղինակներ դարձան Գագիկ Պողոսյանը, Տարոն Ոսկանյանն ու Գոռ Մալաքյանը, իսկ ուլիսցիներից միակ գոլը 11 մ հարվածով խփեց Արսեն Բալաբեկյանը։

**Մրցաշարային աղյուսակ**

| | Խ | Հ | Ո | Պ | Գ | Մ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Շիրակ | 28 | 18 | 5 | 5 | 49-28 | 59 |
| 2. Միկա | 28 | 18 | 4 | 6 | 45-30 | 58 |
| 3. Իմպուլս | 28 | 13 | 5 | 10 | 48-44 | 44 |
| 4. Գանձասար | 28 | 12 | 7 | 9 | 32-24 | 43 |
| 5. Փյունիկ | 28 | 13 | 3 | 12 | 48-38 | 42 |
| 6. Ուլիս | 29 | 8 | 7 | 14 | 33-40 | 31 |
| 7. Արարատ | 29 | 6 | 3 | 20 | 20-54 | 21 |
| 8. Բանանց | 28 | 3 | 10 | 15 | 28-45 | 19 |

**Ռմբարկուները**

| | | |
|---|---|---|
| Նորայր Գյոզալյան | «Իմպուլս» | 18 |
| Ֆոֆանա Բեկո | «Շիրակ» | 12 |
| Անդրանիկ Բարիկյան | «Շիրակ» | 12 |
| Վիուլեն Այվազյան | «Փյունիկ» | 10 |
| Լամին Լի Յորո | «Շիրակ» | 10 |
| Սեմյոն Մուրադյան | «Միկա» | 10 |

ԾԱՆՐԱՄԱՐՏ

# Վերջին մեդալը Հայաստանին պարգեւեց Հայկ Հակոբյանը

Իսրայելում ավարտված ծանրամարտի համաշխարհային ուսանողական 3-րդ առաջնությունում հաջող հանդես եկան հայ ծանրորդները։ Մրցահարթակ դուրս եկած մեր 8 ծանրորդներից 6-ը դարձան մրցանակակիրներ։ Ճիշտ է, չեմպիոն հռչակվել չհաջողվեց։ Ծանրորդներից 4-ը երկամարտում արծաթե մեդալ նվաճեցին, 2-ը դարձան բրոնզե մրցանակակիրներ։ Ընդհանուր առմամբ հայ ծանրորդները Իսրայելում նվաճեցին 1 ոսկե, 9 արծաթե եւ 4 բրոնզե մեդալ։ Ավելի շատ մեդալներ նվաճեցին միայն ռուսները (12 ոսկե, 3 բրոնզե) եւ մոլդովացիները (4 ոսկե, 8 արծաթե, 3 բրոնզե)։ Իսկ թիմային հաշվարկով Հայաստանի հավաքականը 560 միավորով 26 թիմերի մեջ գրավեց 2-րդ տեղը։ Մեր ընտրանին միայն 9 միավոր զիջեց հաղթող ճանաչված Մոլդովայի հավաքականին։ 3-րդ տեղը 469 միավորով զբաղեցրին ռուսները, որոնք ընդամենը 6 ծանրորդով մասնակցեցին մրցումներին։

Մրցումների վերջին օրը Հայաստանի հավաքականին հերթական արծաթե մեդալը պարգեւեց գերծանրքաշային Հայկ Հակոբյանը։ Չեմպիոնի տիտղոսի համար չափազանց անհաշտ մրցակցություն ծավալվեց հայ ծանրորդի, ռուսաստանցի Էդուարդ Մեժգիխովի եւ թուրքմեն Հոջամուհամեդ Թոյչիեւի միջեւ։ Ի վերջո, այդ մրցակցության ելքը վճռեց ծանրորդների անձնական քաշը։ 22-ամյա Հակոբյանը, որի անձնական քաշը 123 կգ 250 գրամ էր, 6 կգ-ով ծանր էր ռուս ծանրորդից։ Հենց դրա պատճառով էլ երկամարտում ցույց տալով Մեժգիխովի հետ հավասար՝ 402 կգ արդյունք, Հայկ Հակոբյանը ստիպված էր բավարարվել արծաթե մեդալով։ Նա արծաթե մեդալներ նվաճեց նաեւ առանձին վարժություններում։

Պոկում վարժությունը Հայկը սկսեց 180 կգ-ից, ապա հաջողությամբ բարձրացրեց նաեւ 185 կգ-ը։ Իսկ ահա 190 կգ-անոց ծանրաձողը նրան չենթարկվեց։ Այստեղ լավագույնը Թոյչիեւի արդյունքն էր, որը 186 կգ-ով արժանացավ փոքր ոսկե մեդալի։ Իսկ ռուս ծանրորդը 180 կգ-ով 3-րդն էր։ Հայաստանի մյուս պատվիրակը՝ Անդրանիկ Հովհաննիսյանը 155 կգ-ով 8 ծանրորդների մրցավեճում գրավեց 5-րդ տեղը։

Ամեն ինչ պետք է վճռվեր հրում վարժությունում։ Հաջող բարձրացնելով 210 եւ 217 կգ-անոց ծանրաձողերը, Հակոբյանը ձախողվեց 220 կգ ծանրությունը բարձրացնելիս։ Իսկ Մեժգիխովն արդեն 2-րդ մոտեցմամբ բարձրացնելով 222 կգ, ապահովեց չեմպիոնի տիտղոսը, քանի որ անձնական քաշով ավելի թեթեւ էր Հակոբյանից։ Երկամարտում բրոնզե մեդալին արժանացավ Հոջամուհամեդ Թոյչիեւը, որը միայն մեկ կգ-ով հետ մնաց առաջատար երկյակից՝ ցույց տալով 401 կգ արդյունք (186+215)։ Անդրանիկ Հովհաննիսյանը հրումում ավելի հաջող հանդես եկավ։ Բարձրացնելով 200 կգ, նա երկամարտի 355 կգ արդյունքով գրավեց 4-րդ տեղը։ Ճիշտ է, մեր ծանրորդը 46 կգ-ով հետ մնաց 3-րդ մրցանակակրից։ Սա խոսում է այն մասին, որ մրցանակակիրները մրցակցությունից դուրս էին։

# Մխիթարյանը նպաստեց «Մետալուրգի» ջախջախմանը

Վերջին շրջանում Հենրիխ Մխիթարյանին չէր հաջողվում գոլի հեղինակ դառնալ։ Եվ ահա Ուկրաինայի առաջնության 15-րդ տուրում Դոնեցկի «Մետալուրգի» հետ խաղում Հենրիխը 2 գոլ խփեց՝ նպաստելով մրցակցի ջախջախմանը (4-0)։

Ուկրաինայի առաջնության 1-ին շրջանի ավարտից հետո Մխիթարյանը 16 գնդակով վստահորեն գլխավորում է լավագույն ռմբարկուների ցանկը։ 2-րդ տեղում ընթացող Կիեւի դինամոյական Բրաուն Իդեյեն 10 գոլ է խփել։

«Մետալուրգի» կազմում հանդիպմանը մասնակցեցին Գեւորգ Ղազարյանը, Կառլեն Մկրտչյանն ու Արտակ Եդիգարյանը։ Ընդ որում վերջինս 55-րդ րոպեին փոխարինեց Ղազարյանին։

«Շախտյորը» շահել է բոլոր 15 հանդիպումները ու 45 միավորով բացահայտ առաջատարն է։ 2-րդ եւ 3-րդ տեղերում ընթացող «Դնեպրն» ու Կիեւի «Դինամոն» առաջատարին զիջում են 14 միավորով։

# Մկրտչյանը հաջորդ փուլում է

Լիլիթ Մկրտչյանը հաջողությամբ հաղթահարեց Խանտի Մանսիյսկում մեկնարկած աշխարհի կանանց առաջնության 1-ին փուլի արգելքը՝ 2 պարտիաներում էլ հաղթելով Քեթեւան Արախամիային։ 2-րդ փուլում նա կմրցի Նադեժդա Կոսինցեւայի հետ, որը 2-0 հաշվով հաղթեց Մելիսա Գոմեսին։ Էլինա Դանիելյանի եւ Սոֆիկո Խուխաշվիլու մրցավեճի ելքը կվճռվի այսօր կայանալիք լրացուցիչ մրցախաղում։ Էլինան 1-ին պարտիան շահեց, 2-րդում՝ պարտվեց։ ԱՄՆ-ը ներկայացնող Տաթեւ Աբրահամյանը 0,5-1,5 հաշվով զիջեց Ալեքսանդրա Կոստենյուկին։

# Յուրա Մովսիսյանը բուժզննում կանցնի Իտալիայում

ՀՀ հավաքականի եւ «Կրասնոդարի» հարձակվող Յուրա Մովսիսյանը մեկնել է Իտալիա, որտեղ բուժզննում կանցնի։ Ոտքի վնասվածքի պատճառով Յուրան չի մասնակցել ՌԴ առաջնության վերջին հանդիպումներին։ Բնականաբար, նա չի մասնակցի նաեւ նոյեմբերի 14-ին կայանալիք Հայաստան-Լիտվա հանդիպմանը։

ՀՀ հավաքականի մեկ այլ հարձակվող՝ Նիժնի Նովգորոդի «Վոլգայում» հանդես եկող Արթուր Սարկիսովը «Զենիթի» հետ խաղում ուժեղ հարված ստանալով ոտքին, փոխարինվել էր։ Նա կժամանի Երեւան, որտեղ լրացուցիչ բուժզննումից հետո միայն պարզ կդառնա ընկերական հանդիպմանը մասնակցելու հարցը։

# Հավակնորդը չորոշվեց

Պրոֆեսիոնալ ռինգում անպարտելի Վանես Մարտիրոսյանի եւ կուբացի Էրիսլանդի Լարայի միջեւ Լաս Վեգասում կայացած մենամարտն ավարտվեց ոչ-ոքի։ 9-րդ ռաունդում մրցակիցները գլուխներով բախվեցին միմյանց, որի հետեւանքով Մարտիրոսյանի ձախ աչքի շրջակայքում լուրջ պատռվածք առաջացավ։ Բժիշկը մրցավարին խորհուրդ տվեց դադարեցնել մենամարտը։ Այդ պահին կողային մրցավարներից մեկի հաշվարկներով Վանեսը 86-85 հաշվով շահում էր մենամարտը։ Մյուս մրցավարն առավելությունը տվել էր Լարային՝ 87-84։ Իսկ ահա 3-րդ մրցավարի կարծիքով հաշիվը հավասար էր՝ 86-86։ Այս ամենի արդյունքում ռինգի մրցավարը ոչ-ոքի արձանագրեց։

Հիշեցնենք, որ այդ մենամարտի հաղթողը պետք է հետագայում առաջին միջինքաշային կարգում WBC-ի վարկածով աշխարհի չեմպիոնի տիտղոսը վիճարկեր չեմպիոնական գոտու տեր Սաուլ Ալվարեսի հետ։ Փաստորեն, այդ տիտղոսի հավակնորդը չորոշվեց։

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

# ՎիվաՍել-ՄՏՍ-ն «WebԾիրան» համահայկական 2-րդ օնլայն կինոփառատոնի գլխավոր հովանավորն է

ՎիվաՍել-ՄՏՍ-ն՝ «ՄՏՍ» ԲԲԸ դուստր ընկերությունը, ուրախ է տեղեկացնել, որ ընկերության գլխամասային գրասենյակում կայացավ համատեղ մամլո ասուլիս՝ նվիրված «WebԾիրան» համահայկական 2-րդ օնլայն կինոփառատոնին: Ասուլիսին մասնակցեցին ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն **Ռալֆ Յիրիկյանը**, «Ոսկե ծիրան» երեւանյան միջազգային կինոփառատոնի տնօրեն **Հարություն Խաչատրյանը** եւ Webtv.am ինտերնետ հեռուստատեսության տնօրեն **Արայիկ Մանուկյանը**:




«WebԾիրան» 2-րդ համահայկական օնլայն կինոփառատոնը կմեկնարկի 2012 թվականի նոյեմբերի 20-ին եւ կավարտվի դեկտեմբերի 20-ին: Փառատոնի գլխավոր հովանավորը ՎիվաՍել-ՄՏՍ-ն է:

«Արդեն երկրորդ անգամ ՎիվաՍել-ՄՏՍ-ն աջակցում է մշակութային կարեւոր միջոցառում դարձած «WebԾիրան» համահայկական օնլայն կինոփառատոնին, որի կարեւոր առանձնահատկություններից մեկն այն է, որ երիտասարդ սերնդի հայ կինոգործիչները գնահատվում են հասարակության կողմից: Վեբ տեխնոլոգիաների եւ կինոարվեստի եզակի այս համադրությունը փիչ հայտնի կինոգործիչներին հնարավորություն է տալիս իրենց ֆիլմերը ներկայացնելու ավելի լայն լսարանի՝ առանց զգալի ֆինանսական ներդրումների եւ առանց սահմաններ հատելու, հնարավորություն է ընձեռում բացահայտելու իրենց տաղանդը, դառնալ հայտնի եւ գրավել հանրության, ինչպես նաեւ ֆիլմարտադրողների ուշադրությունը: Որպես մշակույթի բարեկամ, ՎիվաՍել-ՄՏՍ-ը պատրաստակամ է աջակցել երիտասարդներին՝ իրենց մշակութային ձեռնարկումներում: Երիտասարդ կինոգործիչներին մաղթում եմ հաջողություն՝ իրենց ծրագրերի իրագործման հարցում»,- նշել է ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը:

Փառատոնը սահմանել է 1 գլխավոր եւ 2 խրախուսական մրցանակ: Գլխավոր մրցանակակիրը կպարգեւատրվի 300 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամով եւ հատուկ դիպլոմով, խրախուսական մրցանակի արժանացածները՝ 100-ական ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամով եւ հատուկ դիպլոմով: Ամենաշատ դիտումներ արժանագրած ֆիլմը կարժանանա «Համակրանք» խրախուսական մրցանակին եւ հատուկ դիպլոմի:

«WebԾիրան» 2-րդ համահայկական օնլայն կինոփառատոնի արդյունքները կհրապարակվեն դեկտեմբերի 20-ից 25-ն ընկած ժամանակահատվածում՝ հատուկ մրցանակաբաշխության ժամանակ: Արդյունքները կամփոփի պրոֆեսիոնալ ժյուրին:

«WebԾիրան» 2-րդ համահայկական օնլայն կինոփառատոնին ներկայացված ֆիլմերը ցուցադրվելու են բացառապես webtv.am ինտերնետ հեռուստատեսությամբ:

Կինոփառատոնին կարող են մասնակցել Հայաստանում եւ արտերկրում ապրող բոլոր կինոռեժիսորները՝ ներկայացնելով մինչեւ 20 րոպե տեւողությամբ, առանց ժանրային եւ ձեւաչափային սահմանափակումների ֆիլմեր:

«WebԾիրան» համահայկական կինոփառատոնին մասնակցելու համար, անհրաժեշտ է նոյեմբերի 13-ից դեկտեմբերի 10 ընկած ժամանակահատվածում DVD ֆորմատով ֆիլմերը ներկայացնել «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնի գրասենյակ:

# «Հայաստան» համահայկական հիմնադրամը հանրագիտարաններ ու գիտադարաններ է նվիրել դպրոցներին

«Երեւանը գրքի համաշխարհային մայրաքաղաք 2012»-ի շրջանակներում եւ հայ գրատպության 500-ամյակի առիթով «Հայաստան» համահայկական հիմնադրամը պատմական եւ բնագիտական հանրագիտարաններ ու գիտադարաններ է նվիրել Հայաստանի երկու տասնյակից ավելի դպրոցների, ինչպես նաեւ՝ Շուշիի Աբովյանի անվան դպրոցին:

Այս ձեռնարկով հիմնադրամը միանում է տարվա ընթացքում տեղ գտած եւ մինչեւ 2013թ ապրիլի 23-ը Հայաստանում, Արցախում եւ Սփյուռքում իրականացվելիք գրատպության, ընթերցանության եւ գրավոր արժեքներին նվիրված միջոցառումներին:

Վերջին տարիներին հիմնադրամն այսպիսի նախաձեռնությամբ հանդես է եկել մասնավորապես Հայաստանի ու Արցախի այն մի քանի տասնյակ համայնքներում, որտեղ համայն հայության ջանքերով կառուցել կամ հիմնանորոգել է կրթօջախներ՝ դպրոցներ, գրադարաններ, մշակութային կենտրոններ: Այս ձեռնարկը նպատակ ունի գեղեցիկ ու լուսավոր դասասենյակների հետ միասին պատանիներին փոխանցել այն սերն ու հետաքրքրությունը, որ հայ ժողովուրդն ունեցել է դպրության, մշակույթի ու գիտության նկատմամբ, եւ ինքնության պահպանման ու գոյատեւման երկարամյա պատմության ընթացքում փոխանցել է մեզ՝ ոսկետառ մատյանների հետ միասին:

«Հայաստան» հիմնադրամի գործադիր տնօրեն **Արա Վարդանյանի** խոսքով՝ հայրենիքի վերաշինության ուղղված աշխատանքները երկրում առաջընթաց ապահովում են միայն այն դեպքում, երբ դրանք զուգակցվում են մշակույթի ու դպրության պահպանմանն ուղղված համընդհանուր ջանքերի հետ: «Մենք ցանկանում ենք գիրքը վերադարձնել մեր պատանիների սեղաններին»,- ասում է Արա Վարդանյանը:

## Հայտարարություն

2012թ. նոյեմբերի 19-ին՝ ժամը 14:30-ին, ՀՀ ֆինանսների նախարարության վարչական շենքում (ք. Երեւան, Մելիք-Ադամյան 1) տեղի կունենա «Աուդիտորական ծառայությունների իրականացման լիցենզավորման» հանձնաժողովի հերթական նիստը՝

**Օրակարգում՝**

«ԷՍ ԿԱ ԷՍ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՓԲԸ-ի աուդիտորական ծառայությունների իրականացման թիվ ԱԾ 091 լիցենզիայի գործողությունը «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի «բ» եւ «գ» կետերի հիմքով կասեցնելու վերաբերյալ հարցը (հիմք՝ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետ եւ «ԷՍ ԿԱ ԷՍ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՓԲԸ-ի 06.11.2012թ. (մտից՝ 07.11.2012 Դ/38197-12) դիմում):

***ՀՀ ֆինանսների նախարարություն***

## Հայտարարություն

2012թ. նոյեմբերի 19-ին՝ ժամը 14:15-ին, ՀՀ ֆինանսների նախարարության վարչական շենքում (ք. Երեւան, Մելիք-Ադամյան 1) տեղի կունենա ՀՀ ֆինանսների նախարարության կողմից պարզ ընթացակարգով տրված լիցենզիաների գործողության կասեցման եւ դադարեցման համար եզրակացություններ տվող հանձնաժողովի նիստը:

**Օրակարգում՝**

«ՆԻԳԱՐԻ» ՍՊԸ–ին ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարության կողմից 28.12.2007թ. տրված «Հրագործական ապրանքների արտադրության, ներմուծման կամ առեւտրի» թիվ ՊԼ-5226 լիցենզիայի գործողությունը դադարեցնելու վերաբերյալ 07.11.2012թ. դիմումի քննարկում:

***ՀՀ ֆինանսների նախարարություն***

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից 2013թ. ընթացքում վառելանյութ ձեռք բերելու նպատակով կազմակերպություն ընտրելու համար բաց ընթացակարգ կազմակերպելու մասին**

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը կազմակերպում է բաց ընթացակարգ՝ 2013թ.-ին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից վառելանյութ ձեռք բերելու նպատակով կազմակերպություն ընտրելու համար:

Բաց ընթացակարգին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության եւ օտարերկրյա իրավաբանական եւ ֆիզիկական անձինք, որոնք բավարարում են սույն հայտարարությամբ եւ հրավերով սահմանված որակավորման չափանիշներին եւ ունեն գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, տեխնիկական եւ ֆինանսական միջոցներ:

Բաց ընթացակարգին մասնակցել ցանկացող անձինք պետք է բավարարեն հետեւյալ պահանջներին՝

Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.
2) մասնագիտական փորձառություն.
3) տեխնիկական միջոցներ.
4) ֆինանսական միջոցներ.
5) աշխատանքային ռեսուրսներ:

Հայտերն անհրաժեշտ է ներկայացնել թղթային ձեւով, Հայաստանի Հանրապետություն կենտրոնական բանկ՝ ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով:

Հայտերը պետք է ներկայացվեն հայերեն լեզվով:

Մասնակիցները կարող են իրենց հայտերը ներկայացնել մինչեւ 2012թ. դեկտեմբերի 24-ի ժամը 16:00-ն «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ» ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով:

Հայտերի բացման նիստը անց է կացվելու ՀՀ կենտրոնական բանկում՝ ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով, 2012թ. դեկտեմբերի 24-ի ժամը 16:00-ն:

Մրցույթիարդյունքներիամփոփմաննիստըհրավիրվումէ 2012թ. դեկտեմբերի 27-ինժամը16-00:

Բաց ընթացակարգում հաղթողը որոշվելու է՝

1) այն մասնակցին ընտրելու միջոցով, որի առաջարկած գնին եւ ոչ գնային չափանիշներին տրված գնահատականների հանրագումարը ամենաբարձրն է:

Մրցույթին մասնակցելու հրավերը հրապարակված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային WEB կայքում (www.cba.am): Մրցույթին մասնակցելու հրավերը, ինչպես նաեւ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար ցանկացողները կարող են դիմել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի Գործերի կառավարչություն, հեռ. (010) 592-802, 592-805, ներքին՝ 18-02, 18-05:

***ՀՀ ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն***

Երեւանի քաղաքապետարանի «Երեւանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի իրականացման մասնագետների խմբում ծրագրի ղեկավարի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար:

Մրցույթին մասնակցել ցանկացողները աշխատանքային նկարագրին եւ ներկայացվող մասնագիտական պահանջներին կարող են ծանոթանալ նաեւ Երեւանի քաղաքապետարանի՝ **www.yerevan.am** պաշտոնական կայքում:

Հայտերը պետք է ուղարկվեն ashkhatakazm@yerevan.am էլեկտրոնային հասցեին՝ առարկայի տողում (subject line) նշելով պաշտոնի անվանումը:

Բոլոր հայտերը պետք է ներկայացվեն հայերեն եւ անգլերեն լեզուներով՝ Adobe PDF ֆորմատով միչեւ 2012թ. նոյեմբերի 23–ը, ժամը18.00-ն

Սահմանված ժամկետից ուշ ստացված հայտերը չեն դիտարկվի:

Հայտերը պետք է պարունակեն հետեւյալ փաստաթղթերը՝

1. Ուղեկցող նամակ (առավելագույնը 1 էջ)
2. Ինքնակենսագրություն (Resume կամ CV)
3. Երկու երաշխավորողների անունները եւ կոնտակտային տվյալները:

***«Երեւանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ***

"Investing Projects Implementation Unit Building up of Yerevan" Community Non-Profit organization of the Municipality of Yerevan announces tender for vacancy of Project Manager's position in the professional group for the implementation of urban sustainable development investment program.

Those, who are interested in participating to the tender, also can get acquainted to the job description and professional requirements in the official website of the Municipality of Yerevan: **www.yerevan.am**

Please, send the applications to the following e-mail address: ashkhatakazm@yerevan.am and mention the name of the position on the subject line.

All the applications must be submitted in Armenian and English languages, Adobe PDF Format till November 23, 2012, hour: 18.00.

Late applications after the deadline will not be accepted.

The applications must include the following documents:
Supporting letter (maximum 1 page)
Biography (Resume or CV)
Names and contact details of two guarantors.

***"Yerevan's Investment Project Implementation Unit" Community Non-Profit organization***






ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 12.11.2012, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: